# ԱԼԻՔ

Ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային օրաթերթ

92-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 6 (24559), հատավաճառ՝ 20000 ռիալ

سال نودودوم - شماره (۲٤٥٥٩) ٦ - تکشماره ۲۰۰۰۰ ریال - ۸ صفحه

ԵՐԵՔՇԱԲԹԻ

9 ՅՈՒՆՈՒԱՐԻ 2024

سه شنبه — ۱۹ دی ۱۴۰۲

E-mail: info@alikonline.ir www.alikonline.ir

آلیک

روزنامه سیاسی، اجتماعی، فرهنگی


# ԻՐԱՆԸ ԱՐՁԱԳԱՆԳԵԼ Է ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԿԵՂԾ ՄԻՋԱՆՑՔԻ ՄԱՍԻՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՉԱՐԱԲԱՍՏԻԿ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆԸ



*«ԱԼԻՔ» - Իրանի ԱԳՆ խօսնակ Նասեր Քանանին երէկ՝ յունուարի 8-ին արձագանգելով Զանգեզուրի կեղծ միջանցքի մասին Թուրքիայի չարաբաստիկ յայտարարութեանը, ընդգծել է, որ առեւտրային եւ տարանցիկ համագործակցութեան զարգացումը չի կարող հիմք հանդիսանալ տարածաշրջանում աշխարհաքաղաքական փոփոխութիւնների համար:*

*Parstoday.ir-ի համաձայն՝ թէեւ Իրանը բազմիցս յայտարարել է, որ թոյլ չի տալու աշխարհաքաղաքական ու սահմանային փոփոխութիւններ տեղի ունենան Իրանի հիւսիսում, եւ Հայաստանը նոյնպէս յայտարարել է, որ ոչ մի երկրի միջանցք չի տրամադրելու, Թուրքիայի տրանսպորտի եւ ենթակառուցածքների նախարար Աբդուլղադեր Ուրալօղլուն յայտարարել է, որ Թուրքիան ակնկալում է այսպէս կոչուած «Զանգեզուրի միջանցք»-ի նախագիծն աւարտին հասցնել մինչեւ 2028 թւականը:*

*Իրանի ԱԳՆ խօսնակն այսպէս կոչուած «Զանգեզուրի միջանցք»-ի վերաբերեալ Թուրքիայի տրանսպորտի եւ ենթակառուցածքների նախարարի այս յայտարարութեան մասին ասել է. «Ես տեղեակ չեմ յայտարարութիւնների ճշգրտութեան մասին, բայց մենք ունենք յստակ դիրքորոշում տարածաշրջանում, յատկապէս Կովկասում տիրող իրավիճակի, տարածաշրջանում խաղաղութեան ու կայունութեան, միջանցքների ու տարանցիկ անցումների վերաբերեալ: Մենք ընդգծում ենք տարածաշրջանային համագործակցութեան ընդլայնումը յանուն խաղաղութեան եւ կայունութեան, եւ առեւտրատնտեսական, տրանսպորտային ու տարանցիկ համագործակցութեան»:*

*«Մենք մշտապէս ընդգծել ենք, որ առեւտրային եւ տարանցիկ համագործակցութեան զարգացումը չի կարող հիմք հանդիսանալ աշխարհաքաղաքական փոփոխութիւնների եւ*

**(Շար. 8-րդ էջում)**

Իրանի Կենտրոնական բանկ.

## Թեհրանն ու Մոսկուան ամբողջութեամբ հրաժարուել են SWIFT-ից




*Ռուսաստանն ու Իրանը միացրել են իրենց ֆինանսական հաղորդագրութիւնների փոխանցման համակարգերը, ուստի այժմ բանկերը կարող են իրականացնել ուղղակի գործառնութիւններ: Այդ մասին յայտարարել է Իրանի Կենտրոնական բանկի միջազգային հարցերով փոխնախագահ Մոհսեն Քարիմին:*

*«Մենք միացրել ենք երկու երկրների (ֆինանսական) հաղորդագրութիւնների փոխանցման համակարգերը: Դա նշանակում է, որ երկու երկրների բանկերին Սւիֆթային այլեւս հարկաւոր չէ միմեանց հետ կապուելու համար, եւ երկու պետութիւնների առեւտրային բանկերը կարող են միջնորդական յարաբերութիւններ հաստատել միմեանց հետ: Արտահանողը կարող է ռուսական կողմին ռիալով հաշիւ ներկայացնել եւ դրանով Իրանում ռուսական բանկերից գումար ստանալ»,- Քարիմիի խօսքը մէջբերել է Fars գործակալութիւնը:*

*Իրանի Կենտրոնական բանկի փոխնախագահը նաեւ ընդգծել է, որ երկու երկրների արտահանողները կարող են գործարքներ իրականացնել իրենց ազգային արժոյթներով:*

*Մէկ օր առաջ Իրանի Ազգային զարգացման հիմնադրամի գործադիր խորհրդի անդամ Հուսէյն Այւազլուն յայտարարել էր, որ Ռուսաստանի եւ Իրանի ազգային բարեկեցութեան հիմնադրամները պլանաւորում են ստեղծել համատեղ ներդրումային կոմիտէներ՝ նաւթագազային, նաւթաքիմիական, դեղագործական եւ մի շարք այլ ոլորտներում տարբեր նախագծեր իրականացնելու նպատակով:*

*Իրանի Կենտրոնական բանկի ղեկավար Մոհամմադ Ֆարզինը դեկտեմբերի վերջին յայտարարել էր, որ Իրանի եւ Ռուսաստանի միջեւ արժութային համաձայնագիրը, որը թոյլ կը տայ առեւտուր անել ռուբլով եւ ռիալով, կը ստորագրուի 2024 թւականի առաջին եռամսեակում:*

**parstoday.ir**

Ենթատեքստում «կեղծ միջանցքի» ծրագիրն է խօսում

«Մուսաւաթ»-ի բացայայտած գործակալ.

## «Շարունակւում են Թուրքիայից՝ Նախիջեւան գազատարի կառուցման աշխատանքները»

*«ԱԼԻՔ» - «Մուսաւաթ»-ի բացայայտած գործակալ եւ Ալիեւների ընտանեկան բիզնեսի խորհրդական Բրենդա Շեֆերը հերթական թիթն է հրապարակել, որտեղ առանց «սար ու ձոր» ընկնելու արձանագրել է Իսրայէլի նախագծի երկրորդ փուլի նպատակները:*

*Կովկասեան նաւթամշակման ռազմավարութեան կենտրոնի տնօրէնը, ով նոյն թեքումով Բաքւի համալսարանում զբաղեցնում է ամբիոնի վարիչի պաշտօնը X-հարթակի իր էջում գրել է. «Ադրբեջանի էկոնոմիկայի նախարարի հաստատած տեղեկատւութեան համաձայն՝ շարունակւում են Իգդիր-Նախիջեւան գազատարի տեղադրման համար շինարարական աշխատանքները»:*

*Նա շարունակութեան մէջ յաւելել է, որ 2020 թւականի դեկտեմբերի 15-ին (44-օրեայի արդիւնքում) Ադրբեջանի Հանրապետութիւնը եւ Թուրքիան փոխըմբռնման յուշագիր էին ստորագրել Իգդիր-Նախիջեւան գազատարի կառուցման վերաբերեալ:*

*«Նախագիծը իրականացւելու է Ադրբեջանի պետական նաւթային ընկերութեան (SOCAR) եւ Թուրքիայի BOTAŞ-ի համատեղ ներդրումով: Ներկայումս Նախիջեւանը գազ է ստանում Իրանից: Թուրքիայի տարածքով գազի մատակարարումը կօգնի Նախիջեւանին բաւարարել պահանջարկը եւ կտրւել Իրանից: Գազատարի թուրքական հատւածի*




*երկարութիւնը կազմում է 85 կմ.»,- նշւած է Մուսաւի գործակալի գրառման մէջ:*

*Յիշեցնենք, որ «քառասունչորսօրեայ»-ին յաջորդող շրջանում «ԱԼԻՔ»-ին տւած հարցազրոյցում Իրան-Հայաստան բարեկամութեան միութեան նախկին նախագահ դոկտ. Դամաւանդին անդրադարձել էր նշւած գազատարի թեմային եւ յաւելել, որ գազատարի վրայ ծախսւած գումարներն ու յատկացումների հետքերը տանում են պատերազմից երկու տարի առաջ: Կովկասի հարցերով փորձագէտը նշել էր, որ «չարաբաստիկ միջանցք»-ի հարցը օրակարգում է եղել մինչեւ Ղարաբաղի «Արցախեան երկու»-ն, որով ՆԱՏՕ-ին յաջողւեց մի քայլ եւս մօտենալ իր երազած Կասպիականին:*

*Մէկ այլ հրապարակման համաձայն՝ Թուրքիան յուսով է, որ «Զանգեզուրի միջանցք»-ը շահագործման համար պատրաստ կը լինի 2029 թւականին:*

*Էհսան Մովահեդեանը յղում անելով «Ադրբեջանական հետազօտութիւններ» տելեգրամեան ալիքը նշել է, որ Թուրքիայի տրանսպորտի եւ ենթակառուցւածքների նախարար Ուրալօղլուն յայտարարել է, որ մեծ յոյսեր կան «Զանգեզուրի միջանցք»-ի հետ կապւած եւ նախատեսւած է այն իրականութիւն դարձնել մինչեւ 2029 թւականը:*

*Թուրք պաշտօնեան յաւելել է. «Բացառութեամբ Հայաստանի տարածքով անցնող հատւածի, շինարարական աշխատանքները շարունակւում են նաեւ*

**(Շար. 8-րդ էջում)**

## Եթէ այսօր Բաքւի բարբարոսական վարչախումբը վստահ լինի՝ կարճատեւ եւ իր համար նւազ կորուստներով պատերազմով կը նւաճի Հայաստանը, կը սանձազերծի նման պատերազմ

*«Հայկական հանրային մտքի կոպտագոյն եւ վտանգաւոր սխալն այն է, որ թշնամու հետ պատերազմից, իբր, խուսափելու միջոց է դիտարկւում տարածքային զիջումը, փաստաթուղթը, բանակցութիւնը, «միջազգային հանրութեան» արձագանգը եւ նման այլ մոլորութիւններ»,- նման կարծիք է յայտնել իրանագէտ Վարդան Ոսկանեանը:*

*Մինչդեռ, ըստ նրա, պատերազմից խուսափելու հիմնական եղանակն այդ պատերազմն անխտիր բոլոր մակարդակներում յաղթելուն պատրաստ լինելն է:*

*«Մանկամիտ է պէտք լինել կասկածելու, որ, եթէ հէնց այսօր Բաքւի բարբարոսական վարչախումբը վստահ լինի, որ կարճատեւ եւ իր համար նւազ կորուստներով պատերազմի միջոցով կը*



*նւաճի Հայաստանը, կամ մեր երկրի որեւէ խոշոր հատւած, այն կը սանձազերծի նման պատերազմ:*

*Ուստի ելքը մէկն է՝ հնարաւորին արագ եւ որակեալ կերպով ձեւաւորել պետութիւն-ամրոց Հայաստանը»,- գրել է Ոսկանեանը:*

**Panorama.am**



Ադրբեջանագէտ.

## «Մարտակերտում ոչնչացրել են 44-օրեայ պատերազմի մասնակիցների յուշարձանը, որպէսզի ցոյց տան՝ ինչ կարող է լինել Ստեփանակերտի եղբայրական գերեզմանի հետ»

*(Տես 8-րդ էջում)*



*Դուք հող էք ուզում, մենք ձեզ հող կը տանք,*
*Մեր ձեռքով փորած մի մեծ փոս կը տանք,*
*Որ լցւի փոսը լէշերով թուրքի,*
*Ով հայոց հողը զէնքով ոտք կոխի:*

*Քարն էլ անվճար ձեր վրայ դնենք,*
*Հայոց տառերով մեծատառ գրենք*
*ՍԱ Է ՄԻՇՏ ՎԵՐՋԸ ՅԱՆԿԱՑԱԾ ՄԷԿԻ,*
*ՈՎ ՀԱՅԻ ՏՈՒՆԸ ՋԷՆՔՈՎ ԿԸ ՄՏՆԻ:*

*Պարոյր Սեւակ (1924-1971),*
*հայ մեծանուն բանաստեղծ, մշակութային գործիչ, գրականագէտ եւ թարգմանիչ*


ARAM® coffee
ԱՐԱՄ
قهوه آرام սուրճ
فروشگاه مرکزی:
قائم مقام فراهانی–شماره ۶۴
88303478 եւ 88308730
www.aramcoffee.com
instagram:aram__coffee

# Գնալ կախիչ քանդել, զուգարան, աղբի դոյլ նայել՝ սա էժան պոպուլիզմ է



Yerkir.am - Նիկոլ Փաշինեանը 2024 թուականը սկսեց մարզային այցերով, որի ընթացքում շրջայցեր կատարեց պետական միջոցներով կառուցւած մարզադահլիճներում եւ բազմաթիւ թերութիւններ յայտնաբերեց, ինչի հետեւանքով աշխատանքից ազատուեցին Լոռու եւ Արմաւիրի մարզպետերը, Քաղաքաշինութեան կոմիտէի նախագահը: Panorama.am-ը դիմեց ՀՅԴ անդամ, ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Արթուր Խաչատրեանին՝ պարզելու համար, թէ ո՞ր կառոյցն է անորակ շինարարութեան պատասխանատուն եւ ի՞նչ արդիւնաւէտութեամբ են օգտագործւում պետական միջոցները:

-Փաշինեանը գիտակցում է, որ իր անձից եւ կառավարութիւնից դժգոհութիւնը հասնում է աստղաբաշխական չափերի եւ հիմա ուզում է ամէն ինչ անել, որպէսզի մեղքը բաշխի իր թիմակիցների, ենթակաների շրջապատի վրայ: Հասկանում է, որ այլեւս որեւէ մէկը չի հաւատում եւ չի ուզում լսել նախկիններին ուղղւած մեղադրանքը, թէ բոլոր դժբախտութիւններում նախկիններն են մեղաւոր: Պատասխան տալու ժամանակն է եւ նա օգտագործում է հին հնարքը, որն օգտագործում էր 44-օրեայ պատերազմում պարտութիւնից յետոյ, թէ ինքը մեղք չունի, ուրիշների մեղքով պարտուեց:

Դրա համար էլ այս շոուները, կլոունադան է կազմակերպում՝ գնալ կախիչ քանդել, զուգարան նայել, աղբի դոյլ նայել, սա էժան պոպուլիզմ է:

Կրկնում եմ, միակ նպատակն է իրեն դարձեալ անմեղ հանելը եւ մեղքն արդէն իր շրջապատի վրայ բարդելը: Երկու մարզպետ, Քաղաքաշինութեան կոմիտէի նախագահ, դրանից մի քանի օր առաջ էլ՝ Բարձր տեխնոլոգիական արդիւնաբերութեան նախարարութեան ղեկավար:

Սա է: Ձուկը, որ նեխում է, սկսում են պոչից մաքրել, մինչդեռ նեխել է կառավարութիւնը, կառավարութեան գլուխը: Վերջիններիս պէտք է փոխել, այլապէս անդառնալի կորուստներ կունենանք:

-Ինչպէ՞ս կը գնահատէք երեւոյթը պետական միջոցների ծախսման արդիւնաւէտութեան տեսանկիւնից, քանի որ բողոքներ կան նաեւ այլ նորակառոյցներից, մասնաւորապէս՝ առողջապահութեան համակարգում:

-Հիւանդանոցներից են բողոքում, դպրոցներից, ամենակարեւորը՝ իրենց «հպարտութիւն» ճանապարհների որակը նայէք: Յիշում էք մի քանի ամիս առաջ նոյնիսկ իրենց (ՔՊ խմբակցութեան) պատգամաւորը, կարծելով, որ քննարկումը փակ է, ՏԿԵ նախարարին բողոքեց, ասաց՝ ճանապարհ ենք կառուցում, երկու ամիս անց քանդւում է:

Ես ինքս դեռ 2020 թուականի դեկտեմբերի կէսերին, երբ, այսպէս ասած, այլընտրանքային ճանապարհով Գորիսից գնացի Կապան, ասացի, որ այն 2-3 ամիս չի դիմանայ եւ իրօք 3 ամիս անց այդ ճանապարհը, իրենց հպարտութիւնը, սկսեց քանդուել:

Այն ընդհանուր պետական կառավարման համակարգի փտածութեան, ոչ կոմպետենտութեան, պետութեան նկատմամբ անտարբերութեան դրսեւորում է, որի մեղաւորը, կրկնում եմ, կառավարութեան ղեկավարն ու կառավարութիւնն են, բայց կառավարութեան ղեկավարն իր այս աճպարարութիւններով, կլոունադայով փորձում է ցոյց տալ, որ ինքը մեղք չունի, մեղաւոր են իր ենթակաները եւ ինքը որպէս ուժեղ ղեկավար, պատրաստ է իր պետական կառոյցների ղեկավարներին պատժել:

# «Գարդման-Շիրւան-Նախիջեւան»-ը յայտարարութիւն է տարածել ԼՂ անկախութեան հռչակագրի ընդունման 32-ամեակի կապակցութեամբ



«Գարդման-Շիրւան-Նախիջեւան» Համահայկական միութիւնը յայտարարութիւն է տարածել Լեռնային Ղարաբաղի անկախութեան Հռչակագրի ընդունման 32-ամեակի կապակցութեամբ:

Յայտարարութիւնում ասւում է. «32 տարի առաջ, յունիսի 6-ին Լեռնային Ղարաբաղի Գերագոյն խորհրդի առաջին նստաշրջանը ընդունեց Լեռնային Ղարաբաղի պետական անկախութեան Հռչակագիրը: Մինչ անկախութեան Հռչակագրի ընդունումը Լեռնային Ղարաբաղն անցել էր անկախացման իրաւական բոլոր փուլերով: Դեռ 1991 թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցաւ պատգամաւորների մարզային եւ Շահումեանի Շրջանային խորհրդի համատեղ նստաշրջան, ուր ընդունւեց «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հռչակման մասին»: Նոյն թուականի դեկտեմբերի 10-ին տեղի ունեցաւ հանրաքուէ, որը հաստատեց Լեռնային Ղարաբաղի անկախութիւնը: ԼՂՀ բնակչութեան 80 %-ը մասնակցեց հանրաքուէին, որոնց 99%-ից աւելին քուէարկեց յօգուտ անկախութեան: 1991թ. դեկտեմբերին արցախցիները մասնակցեցին Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Գերագոյն խորհրդի պատգամաւորների ընտրութիւններին: Ձեւաւորւեց հանրապետութեան բարձրագոյն օրէնդիր մարմինը՝ Գերագոյն խորհուրդը:

Այսպիսի օրինական գործընթացներով ձեռք բերւած անկախութիւնը յենւած էր մի քանի ամուր պատմաքաղաքական հիմքերի վրայ: Նախ 1991 թ. օգոստոսի 30-ին Ադրբեջանը հռչակել էր իր անկախութիւնը՝ հռչակելով «1918-1920 թթ. պետական անկախութեան վերականգնման» մասին, որի կազմում չէր եղել ոչ միայն Լեռնային Ղարաբաղը, այլ նաեւ Նախիջեւանը:

Միւս կողմից՝ Ադրբեջանում տարւում էր ապարտէիդի եւ խտրականութեան քաղաքականութիւն հայ ժողովրդի նկատմամբ, ինչը արդէն իսկ յանգեցրել էր զինւած բախումների, խաղաղ հայկական գիւղերի բնակիչների զանգւածային բռնատեղահանման: Սա անհնար էր դարձնում տւեալ պահին երկու ժողովուրդների համատեղ գոյակցութիւնը: ԽՍՀՄ-ում գործող Սահմանադրութիւնն ու օրէնքները թոյլ էին տալիս ինքնավար կազմաւորումներին եւ հաւաքական բնակւող ազգային խմբերին միութենական հանրապետութեան դուրս գալու դէպքում ինքնուրոյն որոշելու իրենց պետական-իրաւական կարգավիճակի հարցը:

Ահա, այսպիսի օբիեկտիւ հիմքերն էին, որ իրաւունք եւ հնարաւորութիւն տւեցին Լեռնային Ղարաբաղի հայութեանը, իրացնելով ազգերի ազատ ինքնորոշման իրենց իրաւունքը, հռչակել իր անկախութիւնը՝ ստեղծելով ամուր եւ զարգացող ժողովրդավարութեամբ պետականութիւն: Ցաւօք սրտի, այս ճանապարհին բազմաթիւ են եղել մարդու իրաւունքների համակարգային խախտումները, հայութեան նկատմամբ բռնութիւններն ու տեղահանութիւնները, որոնց դիմեց Ադրբեջանը յուսահատօրէն ձգտելով կասեցնել Լեռնային Ղարաբաղի անկախացման անշրջելի գործընթացը: Հէնց այս համատեքստում է դիտարկելի աւելի քան կէս միլիոն գարդմանահայութեան, շիրւանահայութեան, նախիջեւանահայութեան տեղահանումը, Սումգայիթի, Բաքւի եւ Մարաղայի ջարդերն ու կոտորածները, վախի ու անհանդուրժողականութեան անընդհատ գերակայումը:

Կատարւած յանցանքների համար անպատժելիութեան գիտակցումը կրկին հնարաւորութիւն տւեց Ադրբեջանին եւս մէկ էթնիկ զտում իրականացնել, այս անգամ Լեռնային Ղարաբաղում, որտեղ շուրջ 10 ամիս միտումնաւոր կերպով յարուցել էր հումանիտար ճգնաժամ՝ սովամահութեան եւ մանկասպանութեան դժնի դիպւածների ուղեկցութեամբ: Սա եւս մէկ անգամ ցոյց է տալիս 32 տարի առաջ անկախութեան այլընտրանքայնութեան բացառումը:

«Գարդման-Շիրւան-Նախիջեւան» Համահայկական միութիւնը շնորհաւորում է Լեռնային Ղարաբաղի հայութեանը 32 տարի առաջ անկախութեան Հռչակագրի ընդունման կապակցութեամբ եւ յոյս յայտնում, որ մօտ ապագայում հնարաւոր կը լինի համատեղ ուժերով հասնել ինչպէս Լեռնային Ղարաբաղի հայութեան, այնպէս էլ գարդմանահայութեան, շիրւանահայութեան, նախիջեւանահայութեան ոտնահարւած իրաւունքների ամբողջական վերականգնմանը»:

yerkir.am

ՀՅԴ Երուսաղէմի Հայ Դատ.

# «Ծանր տեխնիկան դուրս է բերուել Երուսաղէմի հայկական թաղամասի «Կովերի այգու» տարածքից»



Ծանր տեխնիկան, որն աւելի վաղ բերւել էր Երուսաղէմի հայկական թաղամասի «Կովերի այգու» տարածք, յունիսի 7-ին դուրս է բերւել: Այս մասին News.am-ի թղթակցի հետ զրոյցում յունիսի 8-ին ասել է ՀՅԴ Երուսաղէմի Հայ Դատի կոմիտէի անդամ Յակոբ Սեւանը:

Նա տեղեկացրել է, որ տարածք են այցելել նաեւ Երուսաղէմի քաղաքապետարանի աշխատակիցները: Սեւանն աւելացրել է, որ դեկտեմբերի 28-ին ցուցարարների դէմ վերջին յարձակումից յետոյ ոչ մի միջադէպ չի եղել: «Առայժմ իրավիճակը հանգիստ է, նոր խնդիրներ չեն առաջացել»,- նշել է նա:

Յիշեցնենք, որ դեկտեմբերի 28-ին դիմակաւոր անձանց մի խումբ՝ զինւած մահակներով, արցունքաբեր գազի նռնակներով եւ այլ միջոցներով, յարձակւել էր հայերի վրայ, որոնք գտնւում էին Երուսաղէմի հայկական թաղամասի «Կովերի այգու» տարածքում:

Նշենք, որ Երուսաղէմի պատրիարք, արքեպիսկոպոս Նուրհան Մանուկեանը աւելի վաղ հրեայ գործարարին 99 տարւայ վարձակալութեամբ յանձնել էր «Կովերի այգու» տարածքը: Այս որոշումը բաւական աղմուկ էր առաջացրել, եւ երկար պայքարից յետոյ յաջողւել էր չեղարկել գործարքը: Բայց աւելի ուշ ընկերութեան (որին վարձակալութեամբ տրւել էր տարածքը) բուլդոզերները սկսել են քանդել վիճելի տարածքի մի մասը: Երբ ցուցարարները փորձել են կանգնեցնել այդ գործողութիւնները, յայտնւել են զինւած հրեայ վերաբնակները եւ փորձել ցրել ցուցարարներին, բայց անյաջող:

Իրանագէտ.

# «Թեհրանը ցանկանում է ռազմական աջակցութիւն ցուցաբերել Հայաստանին եւ զինտեխնիկա մատակարարել»



Իրանը ցանկանում է ռազմական աջակցութիւն ցուցաբերել Հայաստանին եւ Երեւանին զինտեխնիկա մատակարարել: Այս մասին News.am-ի թղթակցի հետ զրոյցում ասաց Իրանի եւ Եւրասիական հետազօտութիւնների ինստիտուտի փորձագէտ Ղոդրաթօլլահ Շաֆիէն:

Միաժամանակ նա բացատրեց, որ դրա համար անհրաժեշտ է առաջին հերթին հէնց Հայաստանի ցանկութիւնը:

«Որքանով կարելի է դատել, Հայաստանն ինքն այնքան էլ շահագրգռւած չէ իրանական ռազմական տեխնիկայի ձեռքբերմամբ»,- յաւելել է Շաֆիէն:

Նա ենթադրել է, որ դա պայմանաւորւած է եւրոպացիների եւ ամերիկացիների հետ յարաբերութիւնները փչացնելու՝ Երեւանի դժկամութեամբ:

Միաժամանակ փորձագէտը չի հաւատում, որ Հայաստանի դէմ պատերազմի դէպքում Իրանը իր զօրքերը կուղարկի Երեւանին օգնելու:

«Իրանցի զինւորները երբեք չեն կռել այլ երկրում, այդ թւում՝ Եմէնում, որտեղ կռւում են հութիները, կամ Լիբանանում կամ Սիրիայում: Այս բոլոր դէպքերում խօսքը Իրանից ստացւած ռազմական տեխնիկայի ու հետախուզութեան մասին է, բայց իրենք՝ Իրանի Զինւած ուժերը, չեն կռւում:

Ուստի Բաքւից Հայաստանի դէմ նոր ռազմական սադրանքի դէպքում իրանցի զինւորները Հայաստանի համար չեն կռւի»,- ընդգծեց նա:

Միաժամանակ փորձագէտը չի բացառել, որ Իրանը Երեւանին անուղղակիօրէն կօգնի:

«Հնարաւոր է, որ իրանական ռազմական տեխնիկա օգտագործւի: Բայց Հայաստանն ինքը պէտք է պաշտպանի իր շահերը»,- եզրափակեց Շաֆիէն:

**Արամ Դանիէլեան**

# Շատ ժամանակ չմնաց



Վերջին շրջանին յաճախ կը խօսուի այն մասին, թէ հայ-ադրրբէջանական խաղաղութեան համաձայնութեան մը ստորագրութիւնը մօտալուտ է. տրամաբանական է մտածել, թէ այդպիսի համաձայնութեան մը անխուսափելիօրէն պիտի հետեւի հայ-թրքական համաձայնութեան մը կնքումը՝ կանխատեսելի պարունակութեամբ։ Այդպիսի համաձայնութիւններու յանգման պարագային դժուար չէ նախատեսելը, թէ շուրջ երկու դարերու գոյութիւն ունեցող Հայկական Հարցի լուծումը ցարդ կընթանայ դէպի համաթրքական կողմի վերջնական յաղթանակի ուղղութեամբ։ Միամտութիւն է հաւատալ, որ թուրքական խնամատարութեան տակ հայկական պետականութիւն կարելի է պահել։

Այդ համաձայնութիւններով կը սկսի նախորդ դարու իննսունական թուականներու սկիզբները Թուրքիոյ նախկին նախագահներէն մէկուն նախատեսութիւնը, թէ 21-րդ դարը պիտի ըլլայ թուրքութեան դարաշրջանը. վարկածը իրականացնելու ինքնակոչ պաշտօնեան Թուրքիոյ Հանրապետութեան ներկայ նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանն է, որ չափազանց լուրջի առած է իր ցնորական պաշտօնը։ Այդ ուղղութիւնը մատնացոյց կընէ Թուրքիոյ ներկայ ղեկավարութեան ներկայ քաղաքականութեան ընթացքը բոլոր ուղղութիւններու վրայ՝ Արեւելեան Միջերկրականի, Հարաւային Կովկասի, Սեւ եւ Էգէական ծովերու ճակատներու վրայ ամէն օր արտայայտուող քաղաքական ձգտումները, որոնք, առանց բացառութեան կը գտնուին իրենց իրականացման սկզբնական փուլին մէջ։ Հարաւային Կովկասի մէջ երկու մատներու արանքէն կերեւի թուրքական կողմին ժամանակի ընթացքին յաջողութեան հասնելու բաւական բարձր հաւանականութիւնը։

Հայկական քաղաքական միտքը շատ լաւ կը հասկնայ, թէ ուր կրնայ առաջնորդել այս իրավիճակը. հայկական պետականութեան անէացումը եւ պատմական Հայաստանէն հայութեան ի սպառ անհետացումը անխուսափելի կը դառնայ, եթէ հայկական կողմի կրաւորականութենէ անդին չանցնող պաշտօնական կեցուածքները կարճ ժամանակի մէջ չվերածուին ներգործական քաղաքական գործողութիւններու՝ ամբողջական կերպով շարժման մէջ դնելով հայութեան բոլոր տեսակի կարելիութիւններն ու կարողութիւնները։

Ներկայիս դժբախտաբար հայութեան թշնամիները կրցած են լուրջ կերպով պառակտել հայութիւնը։ Հայութեան ազատագրման համար կարելի չէ, ներկայ հանգրուանին, հաւաքագրել հայութեան բոլոր ուժերը, որովհետեւ ՀՀ ներկայ իշխանութիւնները շատ հաշտ կերպով կընդունին թուրքական տարրին հետ համագործակցութիւնը, անտեսելով ո՛չ միայն անցեալի, այլ նաեւ ներկայիս արտայայտուող անոր հայասպան նկրտումները։ Հայութեան անխուսափելիօրէն անհրաժեշտ ազատագրական պայքարը տանելու պարտաւորութիւնը կիյնայ միայն հայոց ազգային ուժերու ուսերուն։ Ներկայ իշխանութիւնները կը մերժեն ազգի գաղափարը, գոհանալով Հայաստանի մնացորդացին վրայ նորազատական սպառողական գերազանցօրէն ապազգային հասարակութիւն մը ստեղծելու անգոյն նպատակով։

Դեռ երեք տասնամեակ առաջ հայութիւնը տարաւ իր յաղթանակը ազգի անունով՝ ազատագրելով Արցախը Ադրբէջանի տիրապետութենէն։ Այսօր Արցախն ու արցախցին Հայաստանին բեռ կը նկատուին երկրի իշխանութիւններուն կողմէ. ապազգային մանրէէն վարակուած է նաեւ հայ ժողովուրդի մէկ մասը։

Հետեւաբար ազատագրական պայքարը կենթադրէ միաժամանակեայ երկու ճակատ. ներքինը՝ սրբելու եւ արմատական կերպով ջնջելու օտարամուտ, ապազգայինը քաջալերող գաղափարները, որոնց քարոզչութիւնը յատկապէս հայրենիքէն ներս ամլացուցած է ազգաբնակչութեան մէկ զգալի մասի ինքնապահպանման բնազդը։ Երկրորդ՝ արտաքին ճակատին վրայ ուժական ներկայութիւն դառնալու համար կարեւոր է բոլոր ազգային ուժերու միաւորումը, նկատի ունենալով ներքին ճակատին վրայ գոյութիւն ունեցող երկւութիւնը եւ ատկէ առաջացող արտաքին ուժերը չէզոքացնելու համար տարուող պայքարի յաւելեալ դժուարութիւնը։

Մէկ խօսքով՝ հարկ է ազգին վերադարձնել իր կորսնցուցած զանգուածին կարելի եղածին չափ մեծ մասը, միաժամանակ կասեցնելով շարունակուող արիւնահոսութիւնը։ Պէտք չէ մոռնալ, որ Հայաստանը ապազգայնացնելու քարոզչութիւնը հիմնուած է առաւելաբար սուտերու տարափի մը վրայ, որուն վնասը չէզոքացնելու համար հարկ է մեծ արագութեամբ չէզոքացնել սուտերու ազդեցութիւնը եւ այդ ազդեցութիւնը երկարաձգող խմբաւորումներն ու մանաւանդ՝ անոնց միջոցներն ու մատակարարման աղբիւրները։ Սայթաքած ժողովուրդի զանգուածը պէտք է անդրադառնայ, որ մեծ խաբէութեան մը թիրախը դարձած է վերջին տասնամեակին։

Ազգային ուժերու դաշինքով պէտք է հետապնդել պետական մեքենան ճիշտ հունի մէջ դնելու աշխատանքը, որուն համար կարեւոր է իշխանութեան գլուխը անցնիլը։ Անհրաժեշտ է արագօրէն նորոգել պետական մեքենան, որուն կարողականութիւնը լրջօրէն պակսած է վերջին հնգամեակի ընթացքին. երկրի մը միանձնեայ կառավարումը չի կրնար արդիւնաւէտ ըլլալ։ Այստեղ պէտք է ընդգծել, որ ՀՅԴ-ը իշխանութիւն բանեցնելու մոլութենէն զերծ է։ Ատիկա փաստուած է ՀՀ-ի նորագոյն պատմութեան ընթացքին. ան միակ կուսակցութիւնն է, որ մաս կազմած է կառավարական դահլիճներու եւ յաճախ՝ հրաժարած անոնցմէ, երբ իր հայեցողութեան հակառակ որոշումներ կայացուած են կառավարութիւններու կողմէ։ Մոռցուած չէ անշուշտ, որ Դաշնակցութիւնը մաս կազմած է Քաղաքացիական պայմանագրի առաջին կառավարութեան եւ, կարճ մասնակցութենէ մը ետք, հրաժարած ատկէ անոր նպատակները շատ արագ ըմբռնած ըլլալով. իսկ 2018-ի իշխանափոխութենէն տարին չամբողջացած հրապարակային կերպով զգուշացուցած կառավարութիւնը, թէ երկիրը կառաջնորդէ դէպի անկում։ Նոյն շրջանին ՔՊ իշխանութիւնը ապօրինի եւ հակասահմանադրական գործելաձեւով կը փոխէր Սահմանադրական Դատարանի բաղադրութիւնը իր պաշտօնավարութեան աւարտի ծրագիրներու հեզասահ իրականացումը ապահովելու հեռանկարով։

Այսօր երկիրը կանգնած է անդունդի եզրին եւ կարիքը ունի ուժեղ իշխանութեան մը դիմագրաւելու համար հետզհետէ բազմացող եւ ուռճացող զոյգ մարտահրաւէրները։

Ժամանակը սկսած է ճնշել։ Շուտով անդունդի եզրէն յետդարձը անկարելի կը դառնայ։ Որեւէ վայրկեանի Հայաստանին կրնայ պատահիլ այն՝ ինչ պատահեցաւ Արցախին աշխարհի աչքերուն առջեւ, ապշահար հայութեան նայուածքներուն տակ եւ ՀՀ իշխանութեան զայրացնող անտարբերութեան ուղեկցութեամբ։

Փրկութեան յոյսը ազգային ուժերու միասնութեան եւ անոնց մարտունակութեան համադրեալ դրսեւորումին մէջ կը կայանայ։ Խօսքերը շատոնց ըսուած են, կրկնութիւններն ալ այլեւս դադրած են մարդոց ականջներուն վրայ ազդեցութիւն գործելէ։ Հարկ է սկսիլ ուժեղ եւ հետեւողական պայքար ներքին եւ արտաքին ճակատներու վրայ վերջ տալով ներկայ անհեթեթ վիճակին, ուր մեր հայրենիքի ճակատագիրը կարելի է գուշակել օդերեւութաբանական վիճակագրական պատահականութեան թերի կանխատեսանելիութեամբ եւ բախտախաղային դիւանագիտութեան շարժումներով, գլուխը պատէ պատ զարնելով, մինչեւ որ զանգը պայթելով բոլորս ականատեսը դառնանք անոր դատարկութեան եւ անոր հետեւող հայրենիքի պարպումին, ինչպէս պատահեցաւ Արցախին։

Կարգը ազգային գիտակցութեան տէր դիմադրութեան է. ներկայ կացութեան շարունակութիւնը փաստացիօրէն նախատեսելի է։ Դիմադրութիւնը, հարկաւ, առայժմ միայն յոյս է, որ սակայն հաւանականութիւն մը ունի վերածուելու իրականութեան. երաշխաւորուած է միայն արժանապատուութեան պահպանումը, յաջորդ սերունդներու հպարտութեան պատճառը եւ ճիշտին օրինակը, որպէսզի թէկուզ հեռաւոր ապագային Րաֆֆի մը սերունդ դաստիարակելու ատաղձ ունենայ իր վէպին ու բանաստեղծութեան միջոցով, որպէսզի կարելի ըլլայ ոգեկան հունտերը փոխանցել ապագայ նորերուն, բազմաթիւ սերունդներու «յաջորդ տարի Արարատի փէշերուն» խօսքը տասնամեակներ կամ դարեր սերունդէ-սերունդ արտասանելէ ետք վերադարձի առաջին քայլը առնուի։

Բարեբախտաբար տակաւին հոն չենք. դեռ առիթներ կան եւ ոճիր է այդ առիթները փախցնելը։

**ՄԿՐՏԻՉ ՄԿՐՏԻՉԵԱՆ**

**Բոստոն, 03 յունուարի 2024**

**Arfd.am**

# Ձեզի, Մեզի Մեծ…Գոյժ



Գիտէք, չէ՞։ Աւետիսն ալ եղաւ «թաւշեայ յեղափոխութեան» զոհը, եւ այդ ալ՝ ի՜նչ «դուխ»-ով։

Աւետիսի փոխարէն, ձեզի, մեզի մեծ… գոյժ։ Չէ «սեւ կատակ» չէ պատահածը, ո՛չ ալ բառախաղ։

Այո՛… Հայաստանի Հանրապետութեան նէօ-բռնապետը, շփոթահար ազգին… ազգընտիր վարչապետը, այս անգամ այլ հին լծակներու ճամբով, փորձեց ինքզինք պարտադրել եւ արգելք հանդիսանալ, որպէսզի համաձայն տարիներու աւանդութեան՝ պետական պատկերասփիւռի կայանը ՝ Հ1-ը տարեվերջին սփռէ Ամենայն Հայոց Գարեգին Բ կաթողիկոսին Ամանորի ուղերձը։ Փոխարէն, Հ1-ը առաջարկեց Ամենայն Հայոց Հայրապետին ուղերձը լոյս ընծայել երեկոյեան լուրերու ընթացքին։

Երազի կամ երեւակայական ժապաւէնի մը մասին չէ մեր խօսքը։

Բազմիցս հանդիպած ենք, որ Վատիկանի մօտակայքը, եօթներորդ արուեստի աշխարհի երբեմնի կենտրոնին՝ Հռոմի «Չինէ Չիթա»-ին մէջ պատրաստուած ժապաւէններ կը պախառակեն եկեղեցին, զայն աղաւաղելու եւ «սրբապղծելու» աստիճան։ Օրինակները բազմաթիւ են, սկսելով Ֆեդերիկօ Ֆելլինիի «Դոլչէ Վիթա»-էն մինչեւ Լինա Վերթմիւլերի կամ դեռ աւելին՝ Պիէռ Պաօլօ Փազոլինիի ծայրայեղութիւնները։

Չշարունակենք, որովհետեւ կարելի չէ բաղդատել իրականութիւնն ու շարժապատկերը միջոց գործածող երեւակայութիւնը։

Պատշաճութիւնը կը պահանջէ, եւ պրոտոկոլն ալ կը հետեւի անոր, որ երկրի աշխարհիկ ղեկավարի ուղերձէն առաջ, հեռարձակուի Վեհափառ Հայրապետի ուղերձը։

Ինչ որ եղաւ քանի մը օր առաջ, այսինքն՝ հոգեւոր առաջնորդի պատգամին լուսանցքայնացումը՝ լուրջ հարուած մըն է պետութեան, պետականութեան, հայոց պատմութեան եւ դեռ աշխարհի ամենահին քրիստոնեայ երկրին։

Դէպք մը, որ վստահաբար ընդվզում կը յառաջացնէ մինչեւ իսկ տարին հազիւ քանի մը առիթներով եկեղեցի այցելողին։

Ազգային արժէքներու ոտնահարման այս ու նմանօրինակ արտայայտութիւնները շատ աւելի մեծ հարցականներ կը ստեղծեն, թէ արդեօք «Իմ քայլ»-ական ղեկավարութիւնը մեծամոլութենէ եւ հալածախտէ՞ կը տառապի։ Կացութիւն մը, որ սկսած է յիշեցնել Ռումինիոյ երբեմնի բռնապետ Չաուչեսքուն, որուն գնդակահարման տարեդարձը նշուեցաւ դեկտեմբերին։

19 Բաղրամեանի վարձակալները յայտնապէս գիտէին, թէ Ամենայն Հայոց Գարեգին Բ կաթողիկոսը իր պատգամին մէջ, սովորական արտայայտութիւններու կողքին, յատուկ տեղ պիտի տրամադրէր Արցախին։ Պատգամէն մէջբերենք հետեւեալը եւ ընդգծենք.- «Հոգածու սիրով շրջապատենք Արցախից բռնի տեղահանուած մեր քոյրերին ու եղբայրներին, նրանց մէջ առատացնենք յոյսը, որ երբեք չմարի հայրենի Արցախ վերադարձի տեսիլքը...»։ Այս խօսքերը այդ օր՝ 31 դեկտեմբերին «անյարիր» պիտի նկատուէր թեթեւսոլիկութեամբ վարակուած՝ Հիւսիսային պողոտայի եւ անմիջական մօտակայքի «ման եկող»-ներուն կողմէ, որոնք այլեւս շատ ալ չեն թաքցներ թշնամիին հաճոյակատարութեան իրենց մոլուցքը…։

Աւելի քան դար մը առաջ, 1901-ին, թատերագիր, վիպագիր, փիլիսոփայ եւ մտաւորական Լեւոն Շանթ, իր «Եսի Մարդը» թատերգութեան մէջ, ամենայն մերկութեամբ նկարագրած էր հայրենասէրի եւ եսասէրի բախումը։ Բեմը Պոլիսն էր, սակայն կրնար ըլլալ աշխարհի որեւէ մէկ ծագը։ Ազգային ապրումներով տոգորուած Սեդրակ եւ տեղական ոստիկանութեան ծառայութեան լծուած գրպանամոլ Մուշեղ ակն ընդ ական կը պայքարին, եւ ի վերջոյ հայրենասիրութիւնն է, որ կը գերիշխէ ընդդէմ եսասիրութեան։

Եզրակացնելու համար, դարձեալ քաղուածք մը ընենք Ամենայն Հայոց Գարեգին Բ կաթողիկոսին Ամանորեայ ուղերձէն եւ ընդգծենք հետեւեալը. «Մենք ժառանգներն ենք մի ազգի, որ տառապել ու չարչարուել է, բայց չի յանձնուել, ցեղասպանուել է, բայց չի կործանուել, սրատուել է, բայց չի մահացել»։

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնն ալ այս գծով գործի լծուած է եւ 2024 տարին, Արամ Ա կաթողիկոս հռչակած է «Մարդուժի պատրաստութեան տարի»։ Այս կամքը մեզ կը մղէ ըսելու. մեր ժողովուրդն ու հայրենիքն ալ պիտի վերածնին եւ մենք ճակատաբաց պիտի ըսենք «ՁԵԶԻ, ՄԵԶԻ ՄԵԾ ԱՒԵՏԻ՛Ս»։

**«Հայրենիք» – Բոստոն**

**Խմբագրական**

# Ազգային առաջնորդարանի պաշտօնէութիւնը իրաժեշտ տուեց 2023 թւականին



*2023 թւականի դեկտեմբերի 30-ին, ազգ. առաջնորդարանի դահլիճում ներկայութեամբ Թ. Հ. Թ. Թեմական խորհրդի ատենապետ ճրտպ. Նորայր Արամեանի եւ խորհրդի անդամների՝ այս տարի ամբողջովին տարբեր մթնոլորտում տեղի ունեցաւ ազգ. առաջնորդարանի պաշտօնէութեան Նոր տարուայ դիմաւորման հանդիսութիւնը:*

*Ցաւօք այս տարուայ խրախճանքին, առողջական խնդրի պատճառով հնարաւոր չեղաւ վայելել թեմիս առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսեանի ներկայութիւնը, սակայն փոխանցւեց նրա հայրական օրհնութիւնն ու ջերմ բարեմաղթանքները:*

*Սկզբում ազգ. առաջնորդարանի դիւանապետ՝ Ջօրիկ Կարապետեանը պաշտօնէութեան անունից շնորհաւորեց Թ. Հ. Թ. Թեմական խորհրդի անդամներին՝ Նոր տարուայ եւ Ս. Ծննդեան տօների առիթով, ընդգծելով, որ պաշտօնէութիւնը՝ իբրեւ մէկ մեծ ընտանիք, գլխաւորութեամբ Սրբազան Հօր եւ Թեմական խորհրդի, պատրաստակամ է վերանորոգ եռանդով շարունակելու իրեն վստահւած աշխատանքը:*

*Թ. Հ. Թ. Թեմական խորհրդի ատենապետ՝ ճրտպ. Նորայր Արամեանը իր հերթին շնորհաւորելով գալիք Նոր տարին, անդրադարձաւ վերջին տարիների ընթացքում առաջնորդարանի դիմագրաւած տնտեսական եւ տարբեր պատճառներով գոյացած մարտահրաւէրներին եւ յոյս յայտնեց, որ այս տարի լինի բարեբեր ու արգասիքներով լի տարի: Նա իր արտայայտութիւնների ընթացքում անդրադարձաւ Արցախի իրադարձութիւններին եւ արցախահայութեան դիմագրաւած ծանր պայմաններին եւ յոյս յայտնեց, որ Նոր տարում աւելի միասնական ջանքեր կը գործադրւեն ի խնդիր մեր քոյրերի ու եղբայրների ցաւերի ամոքման եւ նեղութիւնների ու դժւարութիւնների յաղթահարման:*

*Շնորհաւորական բարեմաղթանքներով ելոյթ ունեցան նաեւ Թեմական խորհրդի փոխատենապետ Վահէ Թարոյեանը եւ ատենադպիր Հայրիկ Աղանեանը:*

*Հարկ է նշել, որ այս տարի պաշտօնէութեան առաջարկութեամբ Նոր տարուայ առիթով նախատեսւած նւէրների գումարը յատկացւեց արցախահայութեան համար վառարանների գնմանը:*

**Ազգային առաջնորդարանի Հանրային կապի գրասենեակ**

# ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

## Ամենայն Հայոց կաթողիկոսը շնորհաւորեց Մայր Աթոռի պաշտօնէութեանը



*Յունուարի 4-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսն Ամանորի եւ Սուրբ Ծննդեան տօների առիթով հանդիպում ունեցաւ Մայր Աթոռի տարբեր կառոյցներում պաշտօնավարող աշխարհական աշխատակիցների հետ:*

*Հանդիպմանն Ամենայն Հայոց Հայրապետը, Ամանորի եւ Ս. Ծննդեան տօների առիթով իր հայրական օրհնութիւնն ու բարեմաղթանքները փոխանցելով ներկաներին, գնահատանքով անդրադարձաւ Մայր Աթոռի աշխատակիցների նւիրեալ ծառայութեանը Եկեղեցու առաքելութեան արդիւնաւորման գործում:*

*Նորին Սրբութիւնը յորդորեց նոյն ոգով եւ նախանձախնդրութեամբ շարունակել իրականացնել իրենց պարտականութիւններն ու աշխատանքները՝ ի շինութիւն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ ի բարօրութիւն հայ ժողովրդի:*

*Հանդիպման ընթացքում Նորին Սրբութիւնն անդրադարձաւ նոր տարուայ անելիքներին ու ծրագրերին:*

# Ձմեռ պապին Հ.Օ.Մ.-ի Թաւրիզի «Ծերունի Գասպարեան» կրթարանում
















***Ատրպատական, ազգային առաջնորդարան, Թաւրիզ–*** *2023 թ. դեկտեմբերի 28-ին, Հ.Օ.Մ.-ի Թաւրիզի կենտրոնի հովանաւորութեան ներքոյ գործող «Ծերունի Գասպարեան» մանկապարտէզ-նախակրթարան այցելեց տարուայ ամենաշատ սպասւած մարդը՝ Ձմեռ պապին:*

*Կրթարանին երեխաների չափ նաեւ մեծերն էին սպասում նրա այցին, կարծէք բռնաթափւելու համար ներկայ աշխարհի տագնապալից եւ ապագայի նկատմամբ անորոշ լուրերի մտահոգութիւնից:*

*Սոյն հաւաքին ներկայ գտնւեց Սրբազան Հայրը: Նրան ընկերակցում էին հոգեւոր հովիւը, Թեմական եւ Պատգամաւորական խորհրդի անդամներ եւ առաջնորդարանի պաշտօնեաներ:*

*Կրթարանի մուտքին Սրբազան Հօրը դիմաւորեցին Հ.Օ.Մ.-ի վարչութիւնը եւ երեխաները, Ուսուցչական կազմի եւ պաշտօնէութեան հետ: Ծրագրի առաջին իսկ րոպէին ուրախութիւնը տիրական ներկայութիւն դարձաւ կենտրոնատեղիում, երբ երեխաները իրենց ուսուցչուհիների՝ Նայիրի եւ Անի Դիլանեանների հետ միասին երգեցին Նոր տարուայ եւ Սուրբ Ծննդեան երգեր, նւագակցութեամբ եւ ղեկավարութեամբ երաժշտութեան ուսուցիչ՝ Կարէն Սարգսեանի:*

*Օրւայ շնորհաւորանքի խօսքը արտասանեց ուսուցչուհի Նայիրի Դիլանեանը: Նա ողջունելով բոլորին Ամանորի առիթով, յուսալից հայեացքով նայեց հայ ժողովրդի պատմութեան, հակառակ ներկայ անյուսութեան իրավիճակին: Կորցրածը վերստին ձեռք բերելու ազգային ոգու թարգմանը հանդիսանալով, Նայիրի Դիլանեանը հեռաւոր երազ չհամարեց դա, վստահ լինելով դեռ նոր գալիք սերունդների կամքին:*

*Ծնողների կողմից պատրաստւած քաղցրեղէններով, սուրճով ու թէյով հիւրասիրւեցին բոլոր ներկաները, միաժամանակ ջերմ մթնոլորտում զրուցելով տօնական օրերի առաջիկայ ծրագրերի մասին, ե՛ւ հաւաքաբար, ե՛ւ անհատական հաւաքոյթների կազմակերպման շուրջ:*

*Ձմեռ պապին բոլորին նւէրներ էր բերել, իսկ հիւրերից ոմանք էլ իրենց կողմից բերւած նւէրները յանձնեցին Ձմեռ պապիին, որպէսզի բազմաթիւ առիթներով զւարճացնի երեխաներին, քաղցր ժպիտներ եւ հիացման պահեր խլելով նրանցից:*

*Ձմեռ պապին երեխաներին նւէրներ բաշխելուց առաջ, նրանցից արտասանութիւն էր պահանջում, որի ի պատասխան՝ նրանք իրենց սովորածները անգիր ասում էին:*

*Կրթարանի ուսուցիչներից Կարէն Սարգսեանը աճպարարական մի քանի ելոյթներ ունեցաւ, խոբապէս զարմացնելով երեխաներին: Նա թղթէ դատարկ պարկի միջից իրեր էր դուրս բերում, շփոթի մատնելով երեխաներին, որոնք նախապէս ստուգել էին պարկի դատարկ լինելը:*

*Ամանորի սոյն ծրագրի եզրափակիչ խօսքով հանդէս եկաւ առաջնորդ Սրբազան Հայրը: Մեր ժողովրդի ողջ պատմութեան ընթացքում ուրախութեան ու տրտմութեան իրար միաձուլւած լինելու մասին բազմաթիւ օրինակներ տւեց Սրբազան Հայրը, սակայն միշտ դրական ելքի դուռը բաց ներկայացնելով, մեր ազգի ու հայրենիքի ապագայի համար. «Հպարտ պիտի լինենք մեր հայ լինելուն, եւ ոչ թէ ամաչենք կամ յուսահատւենք: Մեր պարտականութիւնն է, նոր սերնդին իր հայութեամբ հպարտ լինելու զգացմունքը փոխանցել. այլապէս նրանք յանցաւոր են համարելու մեզ մի օր», - ասաց Սրբազան Հայրը, աւելացնելով. «Եթէ մենք չտեսնենք, մեր յետնորդ սերունդները անպայման տեսնելու են վերածնւած մեր ժողովրդին, իր հզօր հայրենիքով»,- եզրակացրեց նա:*

*Երեխաները Ձմեռ պապիի հետ լուսանկարւելով, առաջիկայ տարւայ համար իրենց ստանալու նւէրների ապսպրանքը կատարելով զւարճացան, միշտ խանդավառ պահելով կենտրոնատեղիի սրահը եւ բոլոր ներկաներին:*

Աւետիք Իշխանեան.

# «Փոքրիկ մարդուկի մեծ բարդոյթները»







*Մասնագէտ չլինելով, երբ հետեւում եմ վարչապետ կոչեցեալի այցերը դէպի մարզեր, մեծագոյն տհաճութեամբ նայելով նրա դէմքի արտայայտութեանը, նոյն տհաճութեամբ լսելով նրա խօսքերը, ափսոսում եմ որ հոգեբան չեմ եւ չեմ կարող գիտական, ճշգրիտ բնորոշում տալ, թէ հոգեբանական ինչպիսի համախտանիշով (սինդրոմ) է հիւանդ այդ անձը: Սակայն, փորձեմ իմ դիտարկումներով, սիրողական ձեւով ներկայացնել, թէ ինչպիսի հոգեբանական համախտանիշեր են բնորոշ վարչապետ կոչեցեալին եւ նրա հպատակներին:*

*Այսօրւայ վարչապետ կոչեցեալի հետ ծանօթ եմ 90-ականների վերջերից: Մեր ծանօթութիւնն այդպէս էլ մնաց, որպէս լոկ ծանօթութիւն, երբեք չվերածւելով աւելի ջերմ ընկերութեան կամ գործընկերութեան: Այսպիսի դիպուկ խօսք կայ: Մէկը միւսին հարցնում է.*

*-Ինչպիսի՞ն է քո եղբայրը:*

*Հետեւում է պատասխանը.*

*-Չգիտեմ, նրա հետ ընկերութիւն չեմ արել:*

*Երբեմն, ինչպէս Ա1+ հեռուստաընկերութեան համար պայքարում, եղել եւ գործել ենք, կարծես որպէս համախոհներ, բայց նորից եմ կրկնում՝ նրա հետ ընկերութիւն չեմ արել:*

*Նրա «Հայկական ժամանակ» թերթի խմբագիր եղած ժամանակ, շատ բացասական բաներ եմ լսել նրա՝ փողապաշտութեան, անազնւութեան, բանսարկութիւնների մասին, բայց այդ պատմութիւնները հալած իւղի տեղ չեմ ընդունել: Առաջին լուրջ հիասթափութիւնս եղաւ 2008 թւականին, ոչ այն պատճառով, որ նա իրեն, այո՝ ձեւացնում էր, որպէս Լեւոն Տէր-Պետրոսեանի թիւ մէկ երկրպագու: Շատերն, այդ թւում իմ ընկերներից ոմանք նոյնպէս 2008 թւականին աջակցում էին Լեւոն Տէր-Պետրոսեանին, որի պատճառով մեր ընկերութիւնը չխաթարւեց: Իսկ, այսօրւայ վարչապետ կոչեցեալից հիասթափւեցի նրա ագրեսիւ կեցւածքի եւ արցախցիների հասցէին հայհոյանքներ տեղալուց յետոյ:*

*Հետագայում, ինձ, միամիտիս թւաց, որ Արցախի հարցում նա փոխել է իր տեսակէտը եւ տարանջատւել Լեւոն Տէր- Պետրոսեանից: Ինչպէս ինձ, այնպէս էլ շատերին, նա մոլորեցրեց, նախ գրելով «Մեծ խառնակչութիւն» յօդւածաշարը, հետագայում Արցախի հարցում մի քանի անգամ միակողմանի տարածքային զիջումների դէմ ելոյթներով:*

*Փաստօրէն, նա յանուն իշխանութեան հասնելու, ստեց եւ խաբեց բոլորին:*

*Ինչեւէ, դառնալով վարչապետ եւ ի պաշտօնէ, լինելով բոլորի ուշադրութեան կենտրոնում, նա բացայայտեց իր իրական կերպարը: Առաջին ծիծեռնակը, հանրապետութեան փողոցների ողողումն էր նրա «իմաստուն» խօսքերով: Սա մի կողմից, ժողովրդին հաճոյանալու փորձ էր, բնորոշ շատ բռնակալների, միւս կողմից ինքնահաստատման առաջին փորձը: Երկրորդը, մաքսատան աշխատողին հրապարակային նւաստացումն էր: Սա արդէն, ինքնահաստատման առաջին քայլն էր, ուրիշին նւաստացման հաշւին, որն էլ ցոյց է տալիս նրա փոքրոգութիւնը, դաժանութիւնն ու մարդկային, աւելի ճիշտ՝ հակամարդկային բարդոյթները: Մեծ համարձակութիւն չէ, լինել երկրի թիւ մէկ պաշտօնեան, շրջապատւած թիկնապահներով եւ հիստերիկ տոնով գոռգոռալ մաքսատան շարքային աշխատողի վրայ, ինչ է որ իրեն՝ ամենագէտ վարչապետին չի ճանաչել եւ զգաստ չի կանգնել իր առջեւ: Հետագայում, այս գործելաոճն իր շարունակութիւնն ունեցաւ, նպատակասլաց կերպով, ժողովրդին նւաստացնելու հաշւին՝ ինքնահաստատւել: Յիշենք, վարչապետ կոչեցեալի ոտքերը համբուրող տատիկին, ցեղասպանութեան յիշատակի օրը վարչապետ կոչեցեալին օրհնող պապիկին, Արցախում, վարչապետ կոչեցեալի մեքենայի յետեւից ջուր ցանողին, «մեզ մենակ չթողնես» կնոջը եւ այլ նման բեմադրութիւններ: Այս բոլոր ներկայացումների հերոսներ՝ տատիկ-պապիկ-կանայք-տղամարդիկ-երեխաները խաղացին իրենց առաջադրւած երկրորդական դերերը, համապատասխան վարձատրութեան դիմաց: Նա եւ իր կողակից, լեդիմակբէթեան համախտանիշով վարչապետուհին, չխորշեցին անգամ, իրենց իսկ հրահրած եւ պարտւած պատերազմի զոհերի ծնողներին նւաստացնելուց: Եւ ցաւօք, այս անգամ էլ, շատ զոհերի հարազատներ տուեցին փողի գայթակղութեանը եւ ժպիտները դէմքերին լուսանկարւեցին վարչապետուհու կողքին:*

*Հետագայում պարզւեց, որ վարչապետ կոչեցեալն իրականում չունի որեւէ մտերիմ ընկեր, գործընկեր, համախոհ: Նա իր բոլոր կուսակից, նախարար, մարզպետների հետ վարւում է, որպէս իր հպատակ՝ նազիր-վեզիրներ-ներքինիների: Այդ են վկայում, նրա պարտադրանքը, որ բոլոր վերոնշեալ գործիչներն իրենց առանձնասենեակներում փակցնեն իր դիմանկարը, ոտքի կանգնեն իր յայտնւելուն պէս, նոյնիսկ պաշտօնից հեռացման դէպքում՝ հրապարակային շնորհակալութիւն յայտնեն: Եւ այդ «ընկերները» հաշտւել են իրենց դերերի հետ, որը կոչւում է՝ նւաստացում, յանուն փողի: Իսկ ընկերների, համախոհների հետ այդպէս չեն վարւում: Ընկերութիւնը բարձր հասկացողութիւն է, որը ենթադրում է ընկերների միջեւ հաւասարութիւն, նւիրւածութիւն եւ ոչ մի դէպքում՝ ընկերոջ շահագործում, օգտագործում եւ նւաստացում: Ակամայից յիշեցի Ալեքսանդր Դիւմայի «Երեք հրացանակիրներ» եւ Էրիխ Մարիա Ռեմարկի «Երեք ընկեր», ընկերութեանը նւիրւած ձօն-վէպերը:*

*Վարչապետ կոչեցեալը, նոյն ինքնահաստատման համար, իր ընդդիմախօսներին փորձում է նւաստացնել, հրահանգ տալով իրեն ենթակայ իրաւապահ մարմիններին քրէական գործեր սարքել եւ մեղադրանքներ առաջադրել նրանց կամ նրանց հարազատների դէմ: Ցաւօք, պէտք է արձանագրել, որ այս հարցում, նա երբեմն յաջողում է: Շատ գործիչներ, մեղադրանքներից յետոյ, «իջան ջրի յատակը» եւ այլեւս ձայն-ծպտուն չեն հանում: Ոմանք, ինչպէս ասում են՝ «կրօնը փոխեցին», դառնալով նրա հպատակներից, ինչպէս երդւեալ ԲՀԿ-ական Սերգէյ Բագրատեանը եւ արդարադատութեան նախարար Գրիգոր Մինասեանը: Ոմանք էլ, յարմարւեցին իրավիճակին, «մոռանալով» իրենց բանտային տառապանքները, ինչպէս Գորիսի եւ Քաջարանի քաղաքապետեր Առուշ Առուշանեանը եւ Մանուէլ Փարամազեանը: Այս անձինք, իմ կարծիքով կրկնակի նւաստացման ենթարկւածներ են: Ի դէպ, անազատութեան մէջ գտնւելը, որպէս նւաստացում չեմ որակում, այլ պայքար, եթէ նրանք ազատւելուց յետոյ կամովին չնւաստանային վարչապետ կոչեցեալի կամ վարչապետուհու առջեւ: Որեւէ արդարացում, թէ «բա ո՞նց աշխատենք, չէ՞ որ նա վարչապետն է», չեմ ընդունում: Եթէ իսկապէս հնարաւոր չի, մի կառչիր պաշտօնից, ունեցիր արժանապատւութիւն, հրաժարական տուր, բայց մի խոնարհւիր դահճիդ առջեւ:*

*Այժմ անդրադառնանք, վարչապետ կոչեցեալի մարզային այցերին: Այստեղ մենք գործ ունենք բոլոր մասնագիտութիւնների՝ շինարարութիւն, կրթութիւն, գիտական տարբեր ճիւղեր, մշակոյթ, սպորտ՝ հզօրագոյն գիտակ անձնաւորութեան հետ: Նրա սուր, մասնագիտական աչքերից չեն վրիպում, ոչ ջրափոսերը, ոչ բասկետբոլի վահանակը, ոչ կախիչները, մի խօսքով ոչ մի մանրուք: Իրականում, այս հերթական էժանագին ներկայացումները ծիծաղելի կը լինէին, եթէ տեղի ունենային մէկ այլ երկրում: Իսկ մեր պարագայո՞ւմ...*

*Նայում ես, թէ ինչպէս են շարք կազմած պատիւ առնում, ողջունում տարբեր պաշտօնեաներ, Արցախն ուրացած, ցեղասպանութեան ենթարկւած, հազարաւոր զոհեր տւած, վարչապետ կոչեցեալին, չգիտես թէ ամօթից ուր կորչես: Վարչապետ կոչեցեալը, միանգամայն «լուրջ եւ խիստ» դէմքի արտայայտութեամբ շրջում է մարզադահլիճով, նրա մասնագիտական աչքից չի վրիպում ոչ մի թերութիւն: Նա խորաթափանց հայեացքով նայում, նկատում է, կատաղում, ջղաձիգ գոռգոռում: Նրան ուղեկցող թափօրից որեւէ մէկը չի համարձակւում հակաճառել, բոլորը հիանում եւ հաւանութիւն են տալիս, իրենց հասցէին հնչած վիրաւորանքներին: Օրինակ, նայում ես, վարչապետ կոչեցեալին մշտապէս ուղեկցող ԿԳՄՍ նախարարուհու հնազանդութիւն եւ միաժամանակ անհանգստութիւն արտայայտող դէմքին ու խղճում. «Արժէ՞ արդեօք, այդ աստիճան նւաստանալ, յանուն փողի»:*

**Ամփոփում**

*Այսպիսով, մենք գործ ունենք եւ աւելի քան հինգ տարի հանդուրժում ենք, ուրիշների տառապանքների ու նւաստացումների հաշւին ինքնահաստատւող, իրականում՝ թերի բարձրագոյն կրթութեամբ, կիսագրագէտ, Յովհաննէս Թումանեանին Նար-Դոսից չտարբերող մի անձնաւորութեան հետ: Ինչպէս վերը նշեցի, չեմ կարող ճշգրիտ, մասնագիտական, հոգեբանական ախտորոշում տալ նման երեւոյթին: Սիրողական մակարդակով, այն կը բնորոշեմ, որպէս փոքրիկ մարդուկի մեծ բարդոյթները համախտանիշ: Դժւարանում եմ ասել, թէ այս բարդոյթն ի ծնէ՞ է, թէ՞ ձեռք բերովի: Ենթադրում եմ՝ եւ, եւ: Չգիտեմ, համաշխարհային պատմութեանը յայտնի՞ է մէկ այլ երկրի նման ղեկավար, որը լինի բարդոյթաւորւած, երկիրը պարտութեան մատնած, բայց եւ իշխանութեան աթոռին կառչած անձնաւորութիւն: Թւում է, որ ոչ: Բայց համաշխարհային գրականութեան մէջ նման հակահերոսիգոյութիւնը, խօսում է նրա իրական նախակերպարի մասին:*

*Նկատի ունեմ 18-19-րդ դարերի գերմանացի գրող Էռնեստ Հոֆմանի «Պստիկ Ցախեսը» այլաբանական հեքիաթի հերոսին: Չներկայացնեմ հեքիաթի հիմնական բովանդակութիւնը, ընթերցողին հնարաւորութիւն տալով, վայելել Հոֆմանի հանճարեղ ստեղծագործութիւնը:*

*Ինչ վերաբերում է, վարչապետ կոչեցեալի հպատակներին, որոնք կամովին իրենց զրկել են սեփական կարծիք ունենալուց, արժանապատւութիւնից եւ հլու-հնազանդ կատարում են իրենց տիրակալի բոլոր քմահաճոյքները, թութակի պէս կրկնելով նրա խօսքերը, ապա նրանք նման են «Ստոկհոլմեան համախտանիշով» տառապող պատանդներին: Չեմ բացառում, որ ապագայում, այն կը կոչւի որպէս «Հայկական համախտանիշ»:*

**yerkir.am**

# Հեռախօսազրոյց՝ այաթ. Ալէ-Հաշեմի եւ Ատրպատականի հայոց թեմի առաջնորդի միջեւ




***Ատրպատական, ազգային առաջնորդարան, Թաւրիզ-*** *Դեկտեմբերի 30-ին, Թաւրիզի Ուրբաթօրեայ աղօթապետ այաթ. Ալէ-Հաշեմը հեռախօսազրոյց է ունեցել Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ՝ Տ. Գրիգոր արք. Չիֆթճեանի հետ, նախապէս շնորհաւորելով 2024 Նոր տարւայ եւ առաջիկայ Սուրբ Ծննդեան տօները:*

*Աղօթապետ Ալէ-Հաշեմը այս առիթով մօտկից հետաքրքրւել է Ատրպատականում ապրող հայ համայնքի առօրեայ կեանքով, միշտ պատրաստակամութիւն յայտնելով, իր հնարաւորին սահմաններում զօրավիգ կանգնել Ատրպատականի հայոց թեմին:*

*Սրբազան Հայրը այս առիթով իր մտահոգութիւնն է յայտնել Պաղեստինի գրաւեալ հողերում եւ յատկապէս Գազայում տեղի ունեցող սպանդի գծով, յոյս յայտնելով, որ սիոնիստական ոճրագործ վարչակարգի սանձարձակ ոմբակոծութեան վերջ կը դրւի միջազգային հանրութեան ջանքերով, եւ կը դադարեցւի անմեղ ժողովրդի կոտորածը: «Տօնական օրերի առիթով եւ յատկապէս խաղաղութեան Իշխանի՝ Յիսուսի Սուրբ Ծննդեան տօնին ծնրադիր աղօթելու ենք, որ իսկական խաղաղութիւնը վերահաստատւի աշխարհում: Այլեւս լռեն թնդանօթներն ու դադարեն հրազէններից փամփուշտների արձակումն, ու մարդկութեան կեանքում տիրական դառնան սէրը, համերաշխութիւնը եւ աստւածապարգեւ մնայուն խաղաղութիւնը: Աշխարհը յոգնել է հակամարտութիւններից եւ թշնամանքից, նա կարօտ ունի սիրոյ, համերաշխութեան եւ խաղաղութեան»,- ասել է Սրբազան Հայրը, ամենայն բարիք մաղթելով Ուրբաթօրեայ աղօթապետ Ալէ-Հաշեմին:*

# Հոգեբանը յիշողութիւնը բարելաւելու 5 խորհուրդ է տուել



Հոգեբան եւ ՄԿՀ-ի պրոֆեսիոնալ մարզիչ Օլգա Զրողնիկովան Գազետա.Ru-ի հետ զրոյցում նշել է, թէ ինչպէս կարելի է բարելաւել մտապահման հմտութիւնները:

***Առաջին ճանապարհը, ըստ նրա՝ «լոլիկ աճեցնելն» է:***

«Երբ դուք լոլիկ էք աճեցնում, դուք դրանք հողից չէք հանում, որպէսզի տեսնէք՝ արդեօք արմատները մեծացե՞լ են: Մեր յիշողութեանը նոյնպէս պէտք է թոյլ տալ, որ հասունանայ: Մի շտապէք, այլ ստեղծէք այնպիսի պայմաններ, ինչպիսիք են լոլիկը ջերմոցում են. պարբերաբար ջրէք եւ պարարտացնէք: Մի բողոքէք վատ յիշողութիւնից, եթէ չէք կրկնել գործողութիւնը, արտայայտութիւնը, գործընթացը այնքան, որ այն ձեզ մօտ մեխանիկական դառնայ: Իւրաքանչիւր ուղեղ անհատական է, իւրաքանչիւրն ունի իր զարգացման ծրագիրը, բայց պտուղները հաստատ կը հասունան, եթէ համբերատար լինեւս»,- բացատրել է նա:

***Երկրորդ մեթոդը «ֆլեշ կրիչը մաքրելն է»:***

«Եթէ մենք պատկերացնում ենք մեր երկարաժամկէտ յիշողութիւնը որպէս համակարգիչ, ապա նախ հաւաքում ենք ամբողջ տեղեկատւութիւնը ֆլեշ կրիչի վրայ: Այս դերը կատարում է ուղեղի մի հատուած, որը կոչւում է հիպոկամպուս: Հինգ զգայական համակարգերից (տեսողութիւն, լսողութիւն, հոտ, շօշափելիք, համ) բոլոր նոր տեղեկութիւնները կուտակւում են ամէն օր, իսկ գիշերը՝ տեղափոխւում երկարաժամկէտ յիշողութեան մէջ: Բայց, իհարկէ, ոչ բոլոր տեղեկութիւնները, այլ միայն նրանք, որոնք «պիտակաւորուած» են որպէս անհրաժեշտ, արժէքաւոր, օգտակար: Մնացածը մաքրւում է: Մաքրումը տեղի է ունենում դանդաղ քնի փուլում, ուստի շատ կարեւոր է բաւականաչափ քնելը»,- ասել է հոգեբանը:

Երկու եղանակ կայ՝ ձեր ուղեղին ցոյց տալու համար, որ այն տեղեկատւութիւնը, որը դուք պէտք է յիշէք, արժէքաւոր է եւ նշանակալի:

«Առաջինը՝ այն, ինչ յիշում էք, պէտք է շատ վառ գունաւորուած լինի զգացմունքներով: Նոյնիսկ հիմա հեշտութեամբ կարող էք մանրամասն յիշել ձեր ամենակարեւոր օրերը՝ երեխայի ծնունդ, հարսանիք, յաղթանակ մրցոյթում: Այս ամէնը ձեր յիշողութեան մէջ դրոշմւում է զգացմունքների միջոցով: Այդ իսկ պատճառով նման յիշողութիւնները կոչւում են տպաւորութիւններ: Իսկ երկրորդ ճանապարհը բազմակի կրկնութիւններն են»,- ըստ shantnews-ի՝ նշել է մասնագէտը:

***Մէկ այլ հանրաճանաչ տեխնիկա է «ռետրիւերին ազատելը»:***

«Շների նման ցեղատեսակ կայ՝ ոսկէ ռետրիւեր: Անունը գալիս է retrieve բայից՝ «գտնել եւ բերել»: Որպէսզի մեր յիշողութիւնն աւելի լաւ աշխատի, մենք պէտք է մի քիչ ռետրիւեր դառնանք: Նոր տեղեկատւութիւնն ամենից շատ յիշւում է, երբ այն յատուկ հանում ես յիշողութիւնից»,- խորհուրդ է տուել Զրողնիկովան:

***Չորրորդ ճանապարհը վախն է:***

«Ոմանք պնդում են, որ իրենք լաւ են յիշում բաները միայն ստրեսի ժամանակ: Սրա բացատրութիւնն էլ կայ. կորտիզոլ հորմոնն արտադրւում է մակերիկամի կեղեւում ըստրեսի ժամանակ, ինչի հետեւանքով մենք զգում ենք ագրեսիւութիւն, անհանգստութիւն եւ լարւածութիւն: Իսկ կորտիզոլի արտազատումը խթանում է ACTH (ադենոկորտիկոտրոպ հորմոն): Այսպիսով, ACTH-ն պատասխանատու է ոչ միայն ստրեսի եւ վտանգի պայմաններում ագրեսիայի համար, այլեւ բարելաւում է յիշողութիւնը, մտապահումը եւ ուսումը:

Վտանգաւոր իրավիճակները դաջուած են մեր յիշողութեան մէջ, մեզ համար կարեւոր է, որ դրանք նորից չյայտնւենք: Հետեւաբար, չափաւոր ստրես է անհրաժեշտ՝ գործելու, արձագանգելու եւ ձեր յարմարաւէտութեան զօտուց հեռանալու համար: Գլխաւորն այն է, որ այն խրոնիկական չդառնայ»,- զգուշացրել է մասնագէտը:

***Հինգերորդ ճանապարհը կանգ առնելն ու «կախւելն է»:***

«Վերջին յայտնագործութիւնները յիշողութեան համախմբման մէջ բացայայտեցին մէկ պարզ սկզբունք. անգիր սովորելու համար հարկաւոր է պարբերաբար ոչինչ չանել: Օրինակ, եթէ համակարգիչը կատարում է չափազանց շատ առաջադրանքներ, եւ նրա RAM-ը չի կարողանում յաղթահարել, ապա այն «կախւում» է: Այս պահին պրոցեսորն աւարտում է բաց առաջադրանքները:

Ինտենսիւ ուսումնասիրութեան ընթացքում օգտակար է ամէն ինչ մի կողմ դնել, հեռացնել տեղեկատւութեան աղբիւրներն ու ուշադրութիւնը շեղող աղբիւրները եւ թոյլ տալ, որ տեղեկատւութիւնը «մարսւի»: 10-15 րոպէ ընդմիջումներ արէք, ականջակալներում միացրէք «սպիտակ աղմուկը»՝ խուսափելով մտաւոր գործունէութիւնից՝ օգնելու յիշողութեան ձեւաւորման նուրբ գործընթացին»,- եզրափակել է հոգեբանը:

**168.am**

# Բացայայտուել է տղամարդկանց կեանքի աւելի կարճ տեւողութեան պատճառը



Տղամարդկանց կեանքի միջին տեւողութիւնը զգալիօրէն աւելի կարճ է, քան կանանցը, այդ թւում՝ կապուած ճարպերի կուտակման առանձնայատկութիւնների հետ. տղամարդկանց մօտ այն կուտակւում է օրգանների շուրջ՝ վերածւելով ներքին օրգանների ճարպի, ինչը մեծացնում է սրտանօթային հիւանդութիւնների զարգացման ռիսկը: Բժիշկ, պրոֆեսոր Օլգա Շարապովան է խօսել այս թեմայի շուրջ:

Ամբողջ աշխարհում կանայք աւելի երկար են ապրում, քան տղամարդիկ: Հնարաւոր պատճառները ներառում են ինչպէս կենսաբանական, այնպէս էլ վարքային տարբերութիւններ, ասել է բժիշկը:

«Վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ տղամարդիկ, միջին հաշւով, աւելի հակուած են անխոհեմ վարքագծին. նրանք աւելի շատ են չարաշահում ալկոհոլը եւ ծխախոտը, ուժի կիրառմամբ լուծում են կոնֆլիկտները այլ տղամարդկանց հետ»,- ըստ shantnews-ի՝ ասել է մասնագէտը:

Բացի այդ, ըստ Շարապովայի, տղամարդիկ աւելի յաճախ են հիւանդանում, քան կանայք, սրտանօթային հիւանդութիւններով:

Սա, ի թիւս այլ բաների, պայմանաւորուած է օրգանիզմում ճարպի պահպանման ձեւերի տարբերութեամբ:

«Կանանց օրգանիզմը, էստրոգէնի հորմոնի բարձր մակարդակի պատճառով, աւելի շատ ճարպ է կուտակում մաշկի տակ, իսկ տղամարդիկ աւելի շատ ճարպ են կուտակում իրենց օրգանների շուրջ: Ներքին օրգանների ճարպի բարձր մակարդակը սրտանօթային հիւանդութիւնների ռիսկի գործօն է»,-բացատրել է բժիշկը:

Սակայն, ինչպէս ընդգծել է Շարապովան, տղամարդիկ կարող են զգալիօրէն նւազեցնել կեանքի միջին տեւողութեան տարբերութիւնը՝ պատասխանատւութիւն ստանձնելով իրենց առողջութեան համար:

Ստանդարտ բժշկական զննումը, ըստ բժշկի, հնարաւորութիւն է տալիս յայտնաբերել պոտենցիալ մահացու հիւանդութիւնները վաղ փուլում, երբ բուժումն առաւել արդիւնաւէտ է:

**168.am**

# Օքսֆորդի բառարանը յայտնել է 2023 թւականի բառը

Օքսֆորդի անգլերէն բառարանը «rizz»-ն անւանել է 2023 թւականի բառ: Այս մասին տեղեկանում ենք Oxford University Press-ի տարածած հաղորդագրութիւնից:

Նախ լեզւաբանները կազմել են տարւայ տրամադրութիւնը եւ մտահոգութիւններն արտացոլող 8 բառերի ցուցակ: 4 օր շարունակ հանրութիւնը քւէարկել է առաւել նախընտրելի տարբերակների օգտին: Արդիւնքում ստացւել է 4 բառ, որոնցից յաղթող է ճանաչւել «rizz»-ը:

«Rizz» խօսակցական լեզւով նշանակում է «ոճ, հմայք կամ գրաւչութիւն»: Այն «խարիզմա» բառի կրճատւած տարբերակն է եւ ակտիւօրէն օգտագործւում է անգլիախօս երիտասարդների կողմից սոցիալական ցանցերում:

«Rizz-ը սոցիալական ցանցերում տարածւած տերմին է: Այս փաստը վկայում է այն մասին, որ բառերը, որոնք շատ տարածւած են որոշ սոցիալական համայնքներում... կարող են լայն տարածում գտնել... Լեզւաբանական էւոլիւցիայի եւ տարածման պատմութիւնը, որը ժամանակին տարիներ էր տեւում, այժմ կարող է շաբաթներ կամ ամիսներ տեւել: «Rizz» բառի օգտագործման կըտրուկ աճն ապացուցում է, որ ինտերնետային մշակոյթից ծագած բառերն ու արտայայտութիւնները գնալով դառնում են առօրեայ խօսքի մասնիկը եւ կը շարունակեն ձեւաւորել լեզւական միտումներն ապագայում»,-ասել է Oxford Languages-ի




նախագահ Կասպեր Գրաթւոլը:

Բացի «rizz»-ից, վերջնական ցուցակում ներառւած էր «Swiftie» բառը, որը վերաբերում է ամերիկացի փոփ երգչուհի Թէյլոր Սւիֆթի երկրպագուներին, «prompt»-ը, որը նշանակում է արհեստական ինտելեկտի վրայ հիմնւած ծրագրին տրւած հրահանգ, որն ազդում է դրա ստեղծած բովանդակութեան վրայ, ինչպէս նաեւ «situationship» բառը՝ ռոմանտիկ յարաբերութիւններ, որոնք չեն համարւում ֆորմալ կամ հաստատւած:

Օքսֆորդի բառարանի 2022 թւականի տարւայ բառն էր «goblin mode»-ը (գոբլինի ռեժիմ), որը խօսակցական լեզւով վերաբերում է ծայրայեղ եսասիրական վարքին, որին յատուկ է ծուլութիւնը, եւ որը մերժում է սոցիալական նորմերը:

# Զգուշացում

Գիտնականներն ապացուցել են, որ մեր արտաբերած ցանկացած հայհոյանք, անէծք, չար խօսք՝ անկախ նրանից այն մտքում ենք ասում, գրում ենք կոմենտներում, բարձրաձայնում ենք, թէ շշնջում.-

1. Ազդում է մեր ԴՆԹ-ի վրայ,[1]: Երբ մարդը վատ բառեր է գրում, անիծում, հայհոյում, վատը ցանկանում՝ նրա քրոմոսոմները «կոտրւում եւ թեքւում» են, գէները փոխում են տեղերը: Արդիւնքում, ԴՆԹ-ն սկսում է անբնական ծրագրեր ստեղծել, տեղի է ունենում մուտացիա[2], որի արդիւնքում տւեալ մարդու ճակատագիրը խեղւում է, առողջութիւնը փչանում է եւ որ ամենասարսափելին է՝ այդ ամէնը փոխանցւում է նաեւ իր սերունդներին: Դա կոչւում է ինքնաոչնչացման ծրագիր:

2. Սոցիալական ցանցերն այսօր հեղեղւած են բացասական էներգիայով: Տպաւորութիւն է, ասես մեր ժողովրդին չարութեան վիրուս են ներարկել. կանայք, մայրերը, աղջիկները, տղամարդիկ անդադար հայհոյում են, անիծում իրար, իրար վիրաւորում, անուն կպցնում, պիտակաւորում, մեղադրում, դատում, աստւածացնում, գետնովը տալիս... Յարձակման է ենթարկւում ցանկացած կարծիք:

ԿԱՐԵԼԻ Է ԽՕՍԵԼ ԱՄԷՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ, ԲԱՅՑ ՈՉ ԱՄԷՆ ԿԵՐՊ:

Պէտք չէ երկրի վրայ կուռքեր ստեղծել: Մարդկութեան պատմութիւնը բազմիցս ապացուցել է, որ երկրային կուռքերը մահաբեր են:

Չարութիւնը չենք կարող դադարեցնել չարութեամբ: Կանգ առէք, ի սէր Աստծոյ, եթէ ոչ յանուն ձեզ, ապա գոնէ յանուն ձեր երեխաների ու գալիք սերնդի:

Բացասական բառերն ու մտքերը, անհանդուրժողականութիւնը, ուրիշներին վիրաւորելը, ծաղրելը, պիտակաւորելը, մեղադրելը, անիծելը դրանք ծրագրեր են, որով թունաւորում էք ձեր կեանքը, չգիտակցելով, թէ ինչ սարսափելի հիւանդութիւնների հիմք էք ստեղծում:

Եկէք բոլորս կիսւենք այս նիւթով, ու եթէ ամէն մէկս կարողանայ գոնէ մէկ հոգու համոզել, որ դադարի քայլել այդ կործանարար ճանապարհով, ապա մի քիչ կաւելացնենք դրական էներգիան:

Այսքան բացասական էներգիան չի կարող վատով չանդրադառնալ մեր երկրի ու մեր ժողովրդի համար:

Դադարեցրէք:

Աստւած պահապան լինի Հայաստանին ու հայ ժողովրդին:

**ԱՐՓԻ ՎԱՆԵԱՆ**
**(Քաղւած՝ համացանցից)**

---

1- (ԴՆԹ, անգլ.՝ DNA) բոլոր կենդանի օրգանիզմների եւ որոշ վիրուսների զարգացման եւ կենսագործունէութեան գենետիկական հրահանգները պարունակող նուկլէինաթթու: (Նուկլէինը ֆոսֆորով հարուստ սպիտակուց է բջջի միջուկում):

2)- Փոփոխութիւն, թռիչք:

# ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՐԱՒԷՐ

«Ա. Աւետիսեան» ազգային բուժարանը կարիք ունի

**ԸՆԴՈՒՆԱՐԱՆԻ ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏՈՂՈՒՀԻ**

Յաւելեալ տեղեկութիւնների համար կապուել 77256457-60 (ներքին 126) հեռախօսահամարներով:

**«Ա. ԱՒԵՏԻՍԵԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ԲՈՒԺԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼ ՄԱՐՄԻՆ**



# آگهی استخدام

## حسابدار

**آشنا به سپیدار و مسلط به مباحث حسابداری**

برای فعالیت در شرکت حمل و نقل بین المللی

در محدوده مفتح شمالی

متقاضیان رزومه خود را به ۰۹۱۲۹۶۴۲۸۲۵ ارسال نمایند.



سفر دوستان قرن

SAFAR DOUSTAN GHARN

TOUR & TRAVEL AGENCY

QeshmAir

نمایندگی رسمی هواپیمایی قشم ایر

شرکت خدمات مسافرتی و جهانگردی سفردوستان قرن

Թռիչքներ է իրականացնում

**երկուշաբթի եւ հինգշաբթի օրերը՝**

դէպի Հայաստան եւ վերադարձ

# ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ

تهران، خیابان شهید بهشتی، بین بزرگراه مدرس و قائم مقام، پلاک ۲۷۱، طبقه همکف

WWW.SAFARDOUSTAN.COM

۸۸۵۱۴۰۵۰





7 STARS

QeshmAir

IRAN AIRTOUR AIRLINES

VARESH AIRLINES

Armenia airways

7setaretours

آژانس مسافرتی

هفت ستاره آسمان آفتابی



خدمات آژانس مسافرتی هفت ستاره آسمان آفتابی :

✦ Հայաստանում՝ Ամերիկայի եւ Կանադայի դեսպանատների հերթագրման ապահովում

✦ Թուրի անմիջական գործադրողը՝ Հայաստանում եւ աշխարհի այլ վայրերում

مجری مستقیم تور در ارمنستان و دیگر نقاط جهان

09303810625 WhatsApp tel: 021-88796742-3




## Յարգելի նուիրատու

Շնորհակալ ենք Քո սրտաբուխ նուիրատուութեան համար:
«ԱԼԻՔ»-ի սիրտը բաբախում է Քո եւ սրտակից ընթերցողների շնորհիւ:
Այս դժուարին պայմաններում Դուք ներշնչում էք մեզ աւելի հաւատք մեր գործին եւ աշխատելու նոր եռանդ, որպէսզի «ԱԼԻՔ»-ը ամէն օր մուտք գործի Ձեր տուն:

*Շնորհակալ ենք, որ Դուք կաք:*

Յարգանօք՝
«ԱԼԻՔ» օրաթերթի
Յայտարարութիւնների բաժին

# ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Այսու մեր խորազգաց ցաւակցութիւններն ենք յայտնում՝ Երէցկին Փառքուհի, Անդրէ եւ Արին Շմաւոնեաններին, Արսինէ, Հենրիկ եւ Թէոդի Սէյֆեաններին ու միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

**ՏԷՐ ՎԱԶԳԷՆ ՔՀՆՅ. ՇՄԱՒՈՆԵԱՆԻ**

ցաւալի մահուան առթիւ:

**Հ. Մ. Մ. «ՆԱՅԻՐԻ» ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

# ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Այսու մեր խորազգաց ցաւակցութիւններն ենք յայտնում՝ Շմաւոնեան ընտանիքին ու միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

**ՏԷՐ ՎԱԶԳԷՆ ՔՀՆՅ. ՇՄԱՒՈՆԵԱՆԻ**

ցաւալի մահուան առթիւ:

**Հ. ՈՒՍ. «ՉՀԱՐՄԱՀԱԼ» ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

**ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ**

Ծաղկեպսակի փոխարէն 10.000.000 ռիալ նուիրում է «Ալիք» օրաթերթին:

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Օժանդակելու համար օրաթերթիս՝ կարող էք ձեր հին թղթերը յանձնել

**«Ալիք» օրաթերթին՝ առաւօտեան ժամը 8-ից մինչեւ ժամը 20:00-ը**

(Մեծ քանակութեան պարագայում՝ նախապէս համադրելու խնդրանօք)՝ հետեւեալ հասցէով.

Հիւսիսային Սոհրեւարդի պող., Մոհեբի փողոց, համար 16

Հեռ.՝88761154

**«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ**


ԱԼԻՔ Օրաթերթ

Արտօնատէր՝ ԱԼԲԵՐՏ ԱՃԵՄԵԱՆ
Հեռախօս՝ (0098-21) 88768567 - 88761154
Հեռապատճէն՝ 88760994
Փոստարկղ՝ 11365-953 Թեհրան - Իրան

آلیک

روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶
کدپستی: ۱۵۵۸۸۳۳۹۱۱
تهران صندوق پستی: ۹۵۳-۱۱۳۶۵ فاکس: ۸۸۷۶۰۹۹۴
تلفن: ۸۸۷۶۱۱۵۴ - ۸۸۷۶۸۵۶۷ چاپخانه آلیک

ALIK ARMENIAN DAILY

Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,
Tehran 1558833911, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 -88761154
Fax: 88760994

E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir



ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ

**ԼՈՒԱՑՔԻ ԵՒ ԱՄԱՆ ԼՈՒԱՑՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ**

Հեռ. 26320084 եւ 09124187835,
Վահիկ Իսկանդարեան




# ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Այսու մեր խորազգաց ցաւակցութիւններն ենք յայտնում՝ Ալիս Դաւթեանին, Թուխծամ եւ Վիլիամ Աւագեաններին, Դաւիթ եւ Ռենիա Դաւթեաններին ու միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

**ՎԱՐԴԱՆ ԴԱՒԹԵԱՆԻ**

ցաւալի մահուան առթիւ:

**Հ. ՈՒՍ. «ՉՀԱՐՄԱՀԱԼ» ՄԻՈՒԹԻՒՆ**

**ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ**

Ծաղկեպսակի փոխարէն 10.000.000 ռիալ նուիրում է «Ալիք» օրաթերթին:


Computer AGMA




خرید و فروش کامپیوتر
ارتقاء سیستم
سرویس در محل

سخت افزار
نرم افزار
شبکه

Tel: 88849305 & 88842385

ایرانشهر شمالی، کوچه نوشهر، پلاک ۳۲، واحد ٦


# ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՈՒՈՒՄ Է

Այսու յայտնում ենք, որ

**2024 թուականի «ԿԱՆԹԵՂ» օրացոյցը**

ստանալու համար կարող էք դիմել հետեւեալ հասցէներին:

| | | |
|---|---|---|
| ۱ | کلیسای سرکیس مقدس | خیابان کریم خان زند، نبش خیابان استاد نجات الهی جنوبی |
| ۲ | فروشگاه آرارات | مجیدیه، ۱۶ متری دوم، مقابل کوچه ۱۱، پلاک ۱۲۱ تلفن: ۲۲۵۲۳۰۱۸ |
| ۳ | فروشگاه رافی | مجیدیه، ۱۶ متری اول، بین کوچه ۶ و ۷، پلاک ۱۳۳ تلفن: ۸۸۴۰۵۲۸۰ |
| ۴ | فروشگاه استاندارد | خیابان سنائی، بین کوچه ۲۲ و ۲۴، پلاک۱۴۹/۳ تلفن: ۸۸۳۰۶۴۶۰ |
| ۵ | کلیسای حضرت مریم | خیابان جمهوری، خیابان میرزا کوچک خان، کلیسای حضرت مریم تلفن: ۶۶۷۰۶۱۵۱ |
| ۶ | ملینا کارت | خیابان میرزای شیرازی، نبش خیابان ۱۵ تلفن: ۸۸۸۲۹۴۲۱ |
| ۷ | سوپر زیتون | نارمک، ۴۶ متری غربی ، شیرمرد جنوبی (سهیلیان)، نرسیده به داریوش ملایری، پلاک ۳۵ تلفن: ۷۷۸۴۸۵۱۵ |
| ۸ | فروشگاه توتو | نارمک، ۴۶ متری غربی، خیابان غیاثی پور جنوبی، نبش خیابان ۸۶ ، پلاک ۵۵ تلفن: ۷۷۹۹۰۶۳۳ |
| ۹ | فروشگاه های کارت | مجیدیه جنوبی، ۱۶ متری اول، روبروی کوچه پنجم، پلاک۸۴ تلفن: ۸۸۴۰۹۶۳۳ |
| ۱۰ | سوپر شهر فرنگ | خیابان قائم مقام فراهانی، جنب داروخانه، پلاک ۵۳ تلفن: ۸۸۳۰۷۸۵۱ |
| ۱۱ | فروشگاه آرمن | نارمک، ۴۶ متری غربی ، شیرمرد جنوبی (سهیلیان)، پایین تر از خیابان ۸۴، پلاک ۳۶ تلفن: ۷۷۲۵۱۵۶۶ |
| ۱۲ | انجمن فرهنگی ورزشی نائیری | مجیدیه جنوبی، ۱۶ متری دوم، کوچه زرین قبائی، پلاک ۱۴۶ تلفن: ۲۲۵۱۰۱۲۸ |
| ۱۳ | روزنامه آلیک | خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶ تلفن: ۸۸۷۶۱۱۵۴ |
| ۱۴ | قهوه آرام | خیابان قائم مقام فراهانی، پایین تر از میدان شعاع، پلاک ۶۴ تلفن:۸۸۳۰۸۷۳۰ |

## ՄԱՀԱԶԴ

Խոր վշտով համակւած յայտնում ենք մեր շատ սիրելի եւ թանկագին՝



**ԷՄԻԿ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ**

ցաւալի մահը, որը տեղի ունեցաւ շաբաթ, յունւարի 6-ին:

Թաղումը կը կատարւի չորեքշաբթի, յունւարի 10-ին, ժամը 13:00-ին, Նոր Բուրաստան գերեզմանատանը:

Ցուղարկաւորներից խնդրում ենք նոյն օրը՝ ժամը 11:30-ին ներկայ գտնւել «Մասիս» անուշարանի (Մասունք քաղաքամաս) մօտ՝ գերեզմանատուն մեկնելու համար:

Ցաւակցութիւնները՝ գերեզմանատանը եւ Ս. Թարգմանչաց եկեղեցուն կից գտնւող «Շաղուլեան» սրահում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Սիրանուշ Շահմուրադեան՝ մայրը:

Վիոլետ, Արթուր եւ Դինօ Բաբախանեաններ՝ դուստրը, փեսան եւ թոռը:

Վերժինէ Խաչիկեան՝ դուստրը:

Էջմին Խաչիկեան՝ որդին:

Ռաֆիկ Խաչատրեան՝ եղբայրը՝ ընտանեօք:

Աննիկ Խաչատրեան՝ քոյրը, Լիա եւ Լոնա՝ քրոջ դուստրերը:

Ռոզիկ եւ Սաթիկ Շահմուրադեաններ՝ մօրաքոյրերը՝ ընտանեօք:

Բաբախանեան ընտանիք՝ խնամիները:

Երկու տարբեր թռիչքներ դէպի՝ Հայաստան
ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ
IRAN AIRTOUR AIRLINES
Qeshm Air
برای تهیه بلیط می توانید با
شرکت حمل و نقل بین المللی و مسافرتی ستی
۰۲۱-۸۸۵۴۱۲۴۲-۵ و ۸۸۵۴۱۲۹۸- ۹ agency@sati-co.com
و در شهر اصفهان با آژانس آرمان گشت «ناربه ژاردن» ۰۹۱۳۳۰۰۸۰۲۹
و شباهنگ سیر «رافیک خداوردیان» ۰۹۱۳۳۰۵۳۸۳۵ تماس حاصل نمایید.
«ԲԱԶԷ» ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ
آژانس مسافرتی «بازه»
BAZE TOUR & TRAVEL AGENCY
Հասցէ՝ Կոմիտաս 20, բն. 22, Երեւան, Հայաստան
Հեռախօս՝ +374 965 75 305 եւ + 374 102 22 824
نشانی: خیابان کومیتاس، شماره ۲۲، ایروان – ارمنستان تلفن: ۸۲۴ ۲۲ ۱۰۲ ۳۷۴+ , ۳۰۵ ۷۵ ۹۶۵ ۳۷۴+
Address: Komitas St., Bld.20, Apt. 22 E-mail: info@bazetravel.am

«Արարատ»
Ամէն տեսակ տնային իրերի գնորդ
سماور ذغالی، نقره جات، ظروف مسی،
چراغ لاله و لوستر،
رادیو لامپی ، رادیوگرام مبله، صفحه گرام ،
لوازم چوبی آنتیک و خرده
Հեռ.՝ 88523388

ՔԱՐԻՄԻ
Գորգերի, սառնարանների եւ գազ սպառող զովամուղի, կահոյքի եւ անտիկ իրերի լաւագոյն գնորդ
خریدار فرش، یخچال فریزر، کولر گازی،
مبلمان، خرده ریز و لوازم آنتیک
Հեռ.՝ 88594063 եւ 09121193212

ԱԼԻՔ-ի
Internet-ային էջն է
www.alikonline.ir

املاک هنرمندان
● بزرگترین آژانس مسکن
مرکز شهر تهران (منطقه ۶)
● خانه های قدیمی تخصص ماست
آدرس: میدان هفت تیر، کریمخان،
خردمند شمالی، نبش دی، ساختمان ۱۱۹، پلاک۴
تلفن: ۸۸۸۴۵۵۶۶ – ۸۸۸۴۵۵۷۷
واتس آپ: ۰۹۱۲۹۵۸۵۱۴۰
مدیر داخلی (هماهنگی): ۰۹۳۰۹۲۱۳۷۲۴
مدیریت: ۰۹۱۹۴۳۱۸۳۱۹ امیر قربانی

SET Coffee
فروشگاه: هفت تیر، قائم مقام فراهانی، خیابان فجر، پلاک ۱۰
کارخانه: شهرک صنعتی خوارزمی، بلوار ماگنولیا، پلاک ۸۱۱۷
0936-6726563
021-88305827
www.set-coffee.com
قهوه سِت

## ՄԱՀԱԶԴ

Խոր վշտով համակւած յայտնում ենք մեր շատ սիրելի եւ թանկագին՝



**ՌԻՄԱ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ**

ցաւալի մահը, որը տեղի ունեցաւ շաբաթ, յունւարի 6-ին:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Ռոժէ, Ռիմա եւ Ռեբեքա Կարապետեաններ՝ որդին, հարսը եւ թոռը:

Ռէնէ Կարապետեան՝ որդին:

Մելքոմեան ընտանիք՝ խնամին:

Մանուչեանս ընտանիք:

**Ցաւակցութիւնների համար խնդրում ենք զանգահարել 88757851 հեռախօսահամարով:**

## ՄԱՀԱԶԴ

Խոր վշտով համակւած յայտնում ենք մեր շատ սիրելի եւ թանկագին՝



**ՄԱՐՕ ԽՈՋԱՍԱՐԵԱՆԻ (ԱԶԱՐԵԱՆ)**

ցաւալի մահը, որը տեղի ունեցաւ կիրակի, յունւարի 7-ին:

Թաղումը կը կատարւի չորեքշաբթի, յունւարի 10-ին, կէսօրւայ ժամը 12:00-ին, Նոր Բուրաստան գերեզմանատանը:

Ցուղարկաւորներից խնդրում ենք նոյն օրը՝ ժամը 11:00-ին ներկայ գտնւել «Մասիս» անուշարանի (Մասունք քաղաքամաս) մօտ՝ գերեզմանատուն մեկնելու համար:

Ցաւակցութիւնները՝ գերեզմանատանը եւ Հ. Մ. Մ. «Րաֆֆի» համալիրի սրահում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Խոջասարեան եւ Ազարեան ընտանիքներ՝ հարազատները:

Ադրբեջանագէտ.

## «Մարտակերտում ոչնչացրել են 44-օրեայ պատերազմի մասնակիցների յուշարձանը, որպէսզի ցոյց տան՝ ինչ կարող է լինել Ստեփանակերտի Եղբայրական գերեզմանի հետ»

*Yerkir.am - Օրերս յայտնի դարձաւ, որ ադրբեջանցիները օկուպացւած Մարտակերտում ոչնչացրել են 44-օրեայ պատերազմի մասնակիցներ Յարութ Բաբայեանի ու Գարիկ Մնացականեանի յիշատակին կանգնեցւած յուշարձանը: Այս մասին գրել է ադրբեջանագէտ Տաթեւիկ Հայրապետեանը:*

*«Ընդորում, դրա մասին ադրբեջանական տելեգրրամ ալիքները շատ հպարտօրէն գրել էին՝ ներկայացնելով որպէս «ահաբեկիչների» յուշարձանի քանդում:*

*Ես վստահ եմ, որ նրանք յատուկ են հանրայնացրել այս տեղեկատւութիւնը նաեւ արձագանգներ ստուգելու համար, եթէ իրենց տրամաբանութեամբ պատերազմի մասնակիցները «ահաբեկիչներ» են, ապա ի՞նչ կարող է լինել Ստեփանակերտի Եղբայրական գերեզմանի հետ, որտեղ թաղւած են առաջին եւ երկրորդ պատերազմի, նաեւ ապրիլեան պատերազմի հերոսները:*

*Սա շատ վտանգաւոր նախադէպ է, որը պէտք է խիստ արձագանգ ստանայ ու որոշ կանխարգելիչ քայլերի արժանանայ, պէտք է աղմուկ բարձրացնել այս հարցի շուրջ ու թոյլ չտալ Ադրբեջանի յանցաւոր քայլերի շարունակականութիւնը, դա հնարաւոր է անել չլռելով ու աշխատելով: Խօսքը մեր հերոսների, մեր կռւի, դրա արժէքի ու խորհրդանիշերի մասին է: Ընդորում, այդ կռիւը մեզ պարտադրել են՝ մեզ վրայ յարձակւելով ու փորձելով ցեղասպանութեան ենթարկել, ափսոս, որ դա հիմա «մոռացւել է»՝ մատուցւող քարոզչական աղբի պատճառով:*

*ՀՀ ԱԳՆ-ն լուրջ անելիք ունի այս հարցում, թէեւ միամտութիւն է նաեւ կարծել, թէ նրանք որեւէ քայլ կանեն...ուրախ կը լինեմ սխալւել»:*

### ԻՐԱՆԸ....

(Շար. 1-ին էջից)

*երկրների տարածքային ամբողջականութեան եւ ազգային ինքնիշխանութեան խախտման համար»,- ասել է Քանանին:*

*Նշենք, որ Իրանի Իսլամական յեղափոխութեան առաջնորդն աւելի վաղ զգուշացրել էր միջազգային սահմանների անվտանգութեան վերաբերեալ եւ ասել. «Երկու կողմերը (Երեւանը եւ Բաքուն) չպէտք է ոտնձգութիւն կատարեն միջազգային սահմանների նկատմամբ եւ ահաբեկիչները չպէտք է տեղակայւեն մեր սահմանների մօտ: Տեղեկութիւններ կան այդ մասին: Ահաբեկիչները չպէտք է մօտենան մեր սահմաններին, որովհետեւ, եթէ նրանք անեն դա, խիստ պատասխան կը ստանան»:*

### «Շարունակւում են....

(Շար. 1-ին էջից)

*Հորադիզից Օրդուբադ ընկած հատւածում: Նա նաեւ նշել է, որ Իրանն իր հերթին հանդէս է եկել ճանապարհ կառուցելու նախաձեռնութեամբ, որով Բաքուն կապւելու է Թուրքիային: Սակայն, մենք կիրականացնենք «Զանգեզուրի միջանցք»-ի նախագիծը, միաժամանակ դէմ չենք, որ Իրանն իր տարածքով Թուրքիայի եւ Բաքւի միջեւ կապի մի մասը լինի»:*

*Քաղաքական դէմքերի յայտարարութիւնների ենթատեքստային հարթակը, որի մասին տեղեկատւութիւնը շատ յաճախ տեղ չի գտնում մամուլի հրապարակումներում, կարող է խօսել այն մասին, որ կուլիսային բանակցութիւններում խճանկարի բացթողնւած հատւածների լրացումը կախւած է սպասւող նախագծերի էութիւնից ու տեսակից:*

*Նոյն ենթատեքստում պէտք է հասկանալ ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմնի ներկայացուցիչ Իշխան Սաղաթէլեանի յայտարարութիւնը, որտեղ քաղաքական գործիչը նկատել է տալիս, որ Ադրբեջանի Հանրապետութեան հետ խաղաղութեան պայմանագրի տեքստում ոչ մի տեղ նշւած չէ Հայաստանի տարածքային ամբողջականութեան մասին, կամ 29.800 քառակուսի կիլոմետր տարածութեան մասին ոչ մի նշում չկայ:*

*Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ բանակցւող «Խաղաղութեան պայմանագիր» փաստաթուղթը պատրաստւել է Բաքւի սպառնալիքների ներքոյ եւ իրականում այն նոր սպառնալիքի առիթ է Հայաստանի դէմ: Լրագրողների հետ հանդիպմանը նշել է ՀՀ Ազգային ժողովում «Հայաստան» խմբակցութեան պատգամաւորը, ով Իրանի Քերմանի ահաբեկչութեան դէպքերի կապակցութեամբ ՀՀ-ում ԻԻՀ դեսպանատուն էր այցելել ցաւակցելու Իրանի դեսպանին:*

*Ուշագրաւ է նաեւ այն փաստը, որ Բաքւի քարոզչամեքենան համահունչ այդ երկրի վարած քաղաքականութեան հետ, իր բնականոն ընթացքն է դարձրել հարեւան պետութիւնների տարածքային ամբողջականութեան դէմ նկրտումների երեւոյթը:*

*«Ենի մուսաւաթ» օրաթերթը, որը համարւում է Իլհամ Ալիեւի կնոջ պաշտօնական խօսափողը, հրապարակած ռեպորտաժների եւ հարցազրոյցների արդիւնքում արդէն քանիերորդ անգամը լինելով, Թաւրիզը ներկայացնում է որպէս Ադրբեջանի Հանրապետութիւնից կտրւած քաղաք, կոչելով այն Հարաւային Ադրբեջանի մայրաքաղաք: Թերթը շարունակելով իր լկտի պահւածքը, նշել է, որ Իրանին ոչ մի իրաւունք էլ վերապահւած չէ Թաւրիզում Հայաստանի համար հիւպատոսութիւն բացելը:*

*Թաւրիզում Հայաստանի հիւպատոսութեան բացման հետ Իրանի համաձայնութեան մասին Բաքւի մաֆիոզուհու թերթի հրապարակումների մասին գրառում հրապարակելով, «Ազարիհա»-ն գրել է, որ նման լկտի պահւածքն ու ցեխարձակումները արդիւնք են Իրանի լրատւամիջոցների թուլութեան, կամ պասիւութեան: «Ալիեւի սիոնիստական ռեժիմի լկտիութիւնը մի կողմից, եւ իրանական լրատւամիջոցների լռութիւնը միւս կողմից, պատճառ են դարձել սովորական տեսք ստանան Բաքւի մեդիա յարձակումներն ու նկրտումները, յատկապէս Իրանի տարածքային ամբողջականութեան դէմ: Նոյն համատեքստում պէտք է տեսնել Իրանի տարածք ներթափանցած Բաքւի գործակալական ցանցերն ու վարձկան թափթփուկները, որոնց միջոցով Իրանի տարբեր քաղաքներում փորձ է արւում էթնիկական պառակտումների գծով աշխատանք իրականացնել»,- գրել է կայքը:*